

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՄԱՆՈՒԿ ԱԲԵԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՄԿՐՏԶՅԱՆ ԴՈՆԱՐԱ ՍԵՐՅՈՒԺԱՅԻ**

**ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ 18-20-ՐԴ ԴԱՐԻ  
ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐԻՆ**

**Ժ. 01.01- «Հայ դասական գրականություն»  
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների  
թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ – 2019**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում

**Գիտական ղեկավար՝**

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
**ՎԼԱԴԻՄԻՐ ԱՂԱՍՈՒ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
**ՍԱՄՎԵԼ ՊԱՐԳԵՎԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ**

բանասիրական գիտությունների թեկնածու  
**ՄԱՅԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**Առաջատար կազմակերպություն՝**

Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2020թ. փետրվարի 7-ին, ժամը 12:30-ին ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ Երևան, Գրիգոր Լուսավորչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019թ. դեկտեմբերի 27-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար՝

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

*Ս. Ա. Մարգարյան*

**Ս. Ա. Մարգարյան**

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

18-րդ դարից սկսած Ռուսական կայսրության հայ գաղթօջախները աստիճանաբար զարգացել ու կարևոր դեր են խաղացել հայ և ռուս ժողովուրդների հարաբերությունների և գրական-մշակութային կապերի զարգացման գործում: Պետերբուրգի հայկական համայնքը թեև 18-19-րդ դարերում համեմատաբար սակավաթիվ է եղել, սակայն նպատակասլացորեն ինտեգրվել է մայրաքաղաքի կյանքին՝ արժանի տեղ զբաղեցնելով հայ-ռուսական հարաբերությունների նոր շրջանի պատմության մեջ:

Պետերբուրգի հայ համայնքի գրական կյանքի ուսումնասիրությանն է նվիրված մեր թեկնածուական ատենախոսությունը: Այն գրվել է ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Ռուսաստանի Դաշնության գրադարաններում և մասնավոր հավաքածուներում, Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում, Ռ-Դ Ազգային գրադարանում (РНБ), Ռ-Դ ԳԱ գրադարանում (БАН), Ռ-Դ ԳԱ Արևելյան ձեռագրերի ինստիտուտում (ИВР РАН), Ռ-Դ պետական Պատմական արխիվում (РГИА) և Սանկտ-Պետերբուրգի Կենտրոնական պետական արխիվի ֆոնդերում (ЦГА СПб) պահվող մեծածավալ գիտական և տեղեկատու գրականության, պարբերականների, ինչպես նաև արխիվային վավերագրերի հիման վրա:

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Մեր գլխավոր նպատակը եղել է ո՛չ թե հայ դասական հեղինակների Պետերբուրգում գրած հանրահայտ ստեղծագործությունների վերլուծությունը, այլ համակարգված ձևով և ըստ ժամանակագրական ընթացքի ներկայացնել Պետերբուրգի ավելի քան երկու հարյուրամյակների հայ գրական միջավայրը և այնտեղ գրված ստեղծագործությունները:

Պատմական մոտեցմամբ փորձել ենք ցույց տալ, թե պայմանավորված Ռուսական կայսրության պատմության շրջափոխերով և հայ կյանքի ժամանակի խնդիրներով, Պետերբուրգն ինչպես է իր կնիքը դրել այստեղ իրականացված հրատարակությունների և գրական ստեղծագործությունների վրա:

## **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ**

Հայ-ռուսական հարաբերությունների ձևավորման մասին արժեքավոր և կարևոր տեղեկություններ են պարունակում Ս. Գլինկայի նախածեռնությամբ հրատարակված «Армяно-русские отношения» և «Сборник актов относящихся к обозрению истории армянского народа» աշխատությունները: Վերջինս բաղկացած է 3 մասից և հրատարակվել է Մոսկվայում՝ 1832-1838թթ: Կ. Եղյանը 1898թ. Պետերբուրգում հրատարակում է «Сношения Петра Великого с армянским народом» ժողովածուն, որի ներածությունը պատմական տեսություն է ռուսաց ցարերի՝ հայերի հետ ունեցած հարաբերությունների վերաբերյալ, իսկ

երկրորդ մասում գետեղված են տարբեր դիվանատներից վերցված վավերագրերը, որոնք ընդգրկում են 1698-1736 թվականները:

18-րդ դարի հայ-ռուսական հարաբերությունների վավերագրերը, այդ թվում նաև գրականությանը և արվեստին վերաբերվող, ի մի են հավաքված «Армяно-русские отношения в XVIII веке» չորս հատորով տպագրված շարքում:

Հայ-ռուսական գրական կապերին հանգամանորեն անդրադարձել է Կ. Գրիգորյանը՝ իր «Ռուս-հայկական գրական և մշակութային փոխհարաբերությունների պատմությունից (10-20-րդ դդ. սկիզբ)» ռուսերեն մենագրության մեջ: 2010 թ. լույս տեսավ Վ. Բարխուդարյանի «Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների պատմությունը» ուշագրավ մենագրությունը: Թեմային վերաբերող կարևոր փաստեր կան Ս. Արեշյանի «Հայ մամուլը և ցարական գրաքննությունը» ռուսերեն աշխատության մեջ:

Վերը նշված, ինչպես նաև հայ-ռուսական պատմամշակութային կապերին նվիրված աշխատանքներից վերցրել ենք Պետերբուրգին վերաբերող պատմագիտական դրույթները և սկզբնաղբյուրային նյութերը, դրանց գումարելով մեր կողմից շրջանառության մեջ դրվող գրական ստեղծագործությունները և վավերագրերը ըստ ժամանակագրական ընթացքի: Յուրաքանչյուր գլխի ներսում թեմատիկ և ժանրային բաժանմամբ ներկայացրել ենք հայ գրականության պատմության պետերբուրգյան շրջանը:

Ատենախոսության գլխավոր նորույթը այն է, որ առաջին փորձն է առանձին քաղաք ընդգրկող գաղթօջախի գրական կյանքը ներկայացնելու:

## **ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Թեման կարևորվում է հայ-ռուսական պատմամշակութային և գրական կապերի պատմության ուսումնասիրության տեսանկյունից: Ներկայացվում է ռուս մտավորականության և ակադեմիական գիտության հայ ժողովրդի պատմության և գրականության հանդեպ ունեցած բարձր գնահատությունը: Պետերբուրգի հիմնադրման սկզբից հայերի ներկայության և ծավալած գրական-մշակութային գործունեության վերհանումը կարևոր նշանակություն ունի քաղաքի այսօրվա հայ համայնքի համար՝ որպես այդ ավանդների կրողի և շարունակողի:

Թեմայի կիրառական նշանակությունը կայանում է Պետերբուրգի հայ գրական կյանքին վերաբերող սկզբնաղբյուրները և գրական ստեղծագործությունները համակարգված և հնարավորինս ընդգրկուն ներկայացնելու մեջ: Այն օգնում է ճշտելու հայ գրականության պատմության մի շարք հարցեր: Աշխատանքը կարող է օգտակար լինել տարբեր գաղթօջախների գրականության տեղային պատմությունը գրելու համար:

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ**

Ուսումնասիրության ժամանակագրորեն ստորին սահմանն է 18-րդ դարի սկիզբը, որը նշանավորվում է քաղաքի հիմնմանը զուգընթաց Պետերբուրգի հայ

համայնքի կազմավորման գործընթացով: Պետերբուրգի հայ գաղութի համար առանցքային ժամանակաշրջան է համարվում 18-րդ դարի 80-ական թվականները, երբ Հովսեփ Արղղությանի և Գրիգոր Խալաթյանի ջանքերով հիմնվում է Ռուսաստանում առաջին հայկական տպարանը:

Պատմաժամանակային պարբերացմամբ կարող ենք ասել, որ Պետերբուրգի հայ գրական կյանքի առաջին շրջանը որոշակիորեն կայսրական բնույթ ունի և կապվում է Եկատերինա-Պոտյոմկինյան ժամանակաշրջանի հետ, որի գործուն դեմքերից էին Հովակիմ Լազարյանը և Ռուսահայոց թեմի առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղղությանը:

19-րդ դարի երկրորդ կեսից սկսած կայսրական գրականությանը զուգահեռ ծավալվում է ոսանողական գրականությունը՝ գրական կյանքն արտահայտվում է Պետերբուրգի հայ ուսանողների ստեղծագործությունների և կազմած ուսանողական խմբակների գործունեության միջոցով:

Ժամանակագրական երկրորդ շենը վերաբերում է 19-րդ դարի Պետերբուրգի հայ գրական կյանքին և ներառում է ժամանակի հայկական ուսանողական միությունների ու խմբակների և վերջիններիս հետ սերտորեն կապված Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի և Ք. Պատկանյանի գրական ու գիտական գործունեությունը:

Վերին ժամանակագրական սահմանը 20-րդ դարի առաջին տասնամյակներն են, ուր ներկայացվում են, Հովհ. Թումանյանի, Վ. Տերյանի, Ե. Չարենցի Պետերբուրգի հետ ունեցած գրական-հասարակական առնչությունները, Պետերբուրգի հայագիտական դպրոցը 20-րդ դարասկզբին, ինչպես նաև տեղի հայերեն ձեռագրերի հավաքածուի ձևավորման պատմությունը:

## **ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսությունը գրված է միջգիտակարգային մոտեցմամբ՝ գրականագիտության, պատմագիտության, այդ թվում բնագրագիտության և աղբյուրագիտության համադրական քննությամբ:

Ընտրվել է վերլուծության պատմահամեմատական մեթոդը, որը լավագույնս հնարավորություն է տալիս գրական ընթացքը և գեղարվեստական ստեղծագործությունները դիտարկել Պետերբուրգի հայ համայնքի ձևավորմանը զուգահեռ, ինչպես նաև այն ներկայացել հայ գրականության պատմության համապատկերում:

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԲՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ**

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Հայ նոր գրականության բաժնի կողմից: Ատենախոսության բոլոր գլուխներն ընդգրկող յոթ հոդվածներ են տպագրվել ԲՈԿ-ի կողմից ընդունվող ամսագրերում և պարբերակներում:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է թեմայի բնույթով և առանձնահատկություններով: Այն կազմված է Ներածությունից, երեք գլուխներից, Եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ ներկայացվում են հարցի պատմությունը, ատենախոսության նպատակը և խնդիրները, թեմայի մշակվածության աստիճանը, արդիականությունը և գիտական նորույթը:

### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

#### ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ 18-ՐԴ ԴԱՐՈՒՄ

##### 1.1 Հովսեփ Արղությանի և Լազարյանների դերը հայ-ռուսական գրական-մշակութային կապերի ձևավորման գործում

Ինչպես վկայում են պատմական վավերագրերը, հայերը Պետերբուրգում հաստատվել են քաղաքի հիմնադրման առաջին իսկ տարիներից: Իսրայել Օրու գինակից Մինաս վարդապետը 1714թ. նոյեմբերի 20-ին դիմում է ռուսական կայսրության բարձրագույն ատյաններին՝ խնդրելով թույլատրել մայրաքաղաքում հայկական եկեղեցի կառուցել<sup>1</sup>: 1730թ. Մոսկվայից եկեղեցական ծառայության է հրավիրվում Իվան Շերիստանովը: Հայերն այդ ժամանակ համահավաք ապրում էին Հայկական անվանվող փողոցում<sup>2</sup>:

1740թ. Լուկա (Ղուկաս) Շիրվանյանի միջոցներով Վասիլյան թերակղզու իր տան բակում դրվում է առաջին քարաշեն հայկական եկեղեցու հիմնաքարը<sup>3</sup>: Ռուսաց եկեղեցու մի շարք թեմերի առաջնորդներ, սակայն, դիմում են սինոդին՝ պահանջելով արգելել հայկական եկեղեցիների կառուցումը<sup>4</sup>:

Իրավիճակը փոխվում է Եկատերինա Երկրորդի գահ բարձրանալուց հետո, երբ պաշտամունքային գործունեության ազատություն է շնորհվում այլ դավանանքներին պատկանող համայնքներին:

Հայ եկեղեցու՝ Ռուսական կայսրության տարածքում գործելու հաջորդ բարդությունը թեմական կառույցի կարգավիճակի ոչ հստակ լինելն էր: Այն կանոնակարգելու և Ս. Էջմիածնի ենթակայությանը հանձնելու խնդրանքով Սիմեոն Ա Երևանցին 1766թ. առանձին թղթով դիմում է կայսրուհուն՝ նամակն

<sup>1</sup> Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч.1, Москва, 1833, с. 355.

<sup>2</sup> Григорьян К., Из истории русско-армянских литературных и культурных отношений, Ереван, 1974, с. 85-86.

<sup>3</sup> Տե՛ս Բարխուդարյան Վ., Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների պատմություն (XVIII դարի կես-XX դարի սկիզբ), էջ 52-53:

<sup>4</sup> Полное Собрание Законов Российской империи., т.16, Санкт-Петербург, 1830, с. 280.

սկսելով Ռուսաց պետությանն ու Եկատերինա Երկրորդին ուղղված մեծարանքի և օրհնության խոսքերով<sup>5</sup>:

Կայսրուհու կողմից տրվելիք նման հրովարտակի՝ որպես աստվածային մի պարզևի զուգահեռով, ասում է, որ ինչպես Քրիստոս ամոթ չհամարեց խոնարհվել դեպ մեր մարդկային բնությունը, որի համար շարունակ փառաբանվում է մարդկանց կողմից, այնպես էլ, եթե կայսրուհին նման հրովարտակով գա «խոնարհիլ ի նուաստութիւն մեր», ապա կաթողիկոսի հովված ժողովուրդն էլ կդառնա Եկատերինայի թագավորության օրհնաբանողը:

Խոստացված աղոթական այս մաղթանքը Սիմեոն կաթողիկոս գրում է 1771թ.: Պահպանվել է նույն թվականին գրված և հայրապետական կնիքով ու ստորագրությամբ հաստատված այն օրինակը, որը հատուկ պատրաստվել և ուղարկվել է կայսրուհուն և գահաժառանգ Պավել Պետրովիչին<sup>6</sup>:

Մաղթանքն սկսվում է «Շարակնոցից» վերցված այն հատվածով, որում Աստծուն, որպես երկնային թագավորին ուղղված խնդրանքում ասվում է, թե ինչպես Քո երկնային ու աներևույթ թագավորության օրինակով հաստատեցիր երկրային թագավորությունը, այնպես էլ հանուն Նրա իշխանության ներքո գտնվող ժողովրդի, այդ թագավորին պահիր «անսասն և անպարտելի»: Ապա բերվում են ասվածին համահունչ աղոթքներ և Սուրբգրային հատվածներ:

Կանոնն ավարտվում է գրաբարով ու հոգևոր ավանդների դասական հետևողությամբ գրված ծավալուն աղոթքով, որում հայցվում է, որ Աստված զորություն պարզևի Ռուսաց թագավորին ու նրա իշխանության ներքո գտնվողներին: Կանոնի մեջ կայսեր և թագավորական ընտանիքի անդամների անունները հիշված չեն, քանի որ նրանք ժամանակի ընթացքում փոխվում էին, իսկ կանոնի կատարումը շարունակվում էր: Նույն ձևն էր կիրառվում նաև միջնադարյան ծիսական ժողովածուներում, երբ գրվում էր «թագաւորին մերոյ՝ այս անուն» կամ «Հայրապետին մերոյ՝ այս անուն»:

Մաղթանքի՝ Սիմեոն կաթողիկոսի ինքնագիր օրինակից է կատարվել առաջին հրատարակությունը 1794թ. Նոր Նախիջևանում:

Նվիրված լինելով Եկատերինա կայսրուհուն, այն նախատեսված էր հայկական եկեղեցիներում կատարել ռուսական կայսերական տան հանդիսության տոնի օրը: Այս պատճառով հաջորդող տասնամյակներում մինչև 1917 թ., այն շարունակվում է կատարվել մյուս թագավորների գահակալության և կայսերական ընտանիքի անդամների հետ կապված տոնական օրերին, որի համար ունենում է 9 հրատարակություն:

Այս մաղթանքը եկեղեցական արարողությունների ծիսական ձևի մեջ դրված ներբողյան էր, որը շարունակում էր եկեղեցական և թագավորական իշխանություններին նվիրված մաղթանքների գրական ավանդույթը: Այն արդեն

---

<sup>5</sup> Տե՛ս Армяно-русские отношения в XVIII веке, 1760-1800гг., Сборник документов, том IV, под редакцией М. Г. Нерсияна, Ереван, 1990, стр. 70.

<sup>6</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռգ. հմր. 7788, թերթ՝ 4ա:

վերաբերվում էր Ռուսական կայսրությանը և արտահայտում էր ժամանակի ազգային-քաղաքական ակնկալիքները:

1779թ. կառուցվում է Ս. Կատարինե եկեղեցին, որն օծվել է 1780 թ. փետրվարի 18-ին՝ ռուսահայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղության-Երկայնաբազուկի կողմից՝ ի փառս կայսրուհու երկնային հովանավոր սբ. նահատակ Եկատերինայի: Օծման արարողությանը ներկա է գտնվել իշխան Գ. Ա. Պոտյոմկինը:

Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժնի Լազարյանների ֆոնդում, պահվում է եկեղեցու օժման ժամանակ Արղությանի խոսած քարոզի հայերեն ինքնագիր մի օրինակը: Արղությանը խոսքն սկսում է Հայաստանում առաքելական քարոզությունից, ապա անցնում Սուրբ Գրիգորի ձեռամբ քրիստոնեության հաստատմանը<sup>7</sup>: Այնուհետև թվարկվում են հաջորդող դարերում հայ ժողովրդի քրիստոնեական վկայությունները եկեղեցու դեմ ծավալված հալածանքների ժամանակ:

Եկատերինա Երկրորդը, սովորաբար, համեմատվում էր Պետրոս Մեծի հետ, քանի որ մինչև այդ որևէ այլ նշանավոր թագավոր չկար: Նույն ձևով Արղությանն է գրում, որ Պետրոս Մեծի գործի շարունակող Եկատերինա կայսրուհին ևս իր հովանու ներքո վերցրց հայ ժողովրդին՝ նրա համար ստեղծելով բարենպաստ պայմաններ և թույլ տալով եկեղեցիներ կառուցել՝ ի մասնավորի այս եկեղեցին, որը նվիրված է սրբուհի Եկատերինային:

Կայսրական գրականության՝ Եկատերինայի հետ կապված երրորդ բնորոշ օրինակն է Ստեփանոս Խոջումյանի «Բան գովասանութեան շարադրեալ ի պատիւ Գերամեծար պերճապատիւ ազնիւ ազնեայ Յովհաննէս իշխանին Հայոց» գրաբար ներբողյանը՝ գրված «Յաղագս եկեղեցաշինութեան, որ կառոյց անուամբ Սրբուհոյ եւ մեծի կուսին Կատարինէի, որ ի Սանկտ Պետերբուրգ կայսերանիստ քաղաքի»<sup>8</sup>: Գրված է Պետերբուրգի Ս. Կատարինե եկեղեցու կառուցման առիթով: Սիմեոն Ա Երևանցու՝ կայսրական տանն ուղղված մաղթանքից և Արղությանի քարոզից հետո, սա Եկատերինա Երկրորդին ուղղված երրորդ ստեղծագործությունն է՝ գրված հայկական միջավայրում:

Լազարյանի կառուցած եկեղեցու հիշատակմամբ անցում է կատարում եկեղեցու շինությունն ստանձնած Եկատերինա կայսրուհուն՝ զուգահեռ անցկացնելով նրա անվան հիմքում ընկած Ս. Կատարինեի հետ, ով քրիստոնեության առաջին դարերի հռչակված սրբուհիներից էր:

Արձակ ներբողյանի վերջում գետեղված է «Երգք գովասանաց ոտանաւոր չափով» չափածոն: Այն նախորդող արձակի բանաստեղծական խտացումն է: Չափածոյի բոլոր տողերն սկսվում են *-ի* հանգով:

Պետերբուրգի հայ համայնքի ձևավորման և եկեղեցական կյանքի կարգավորման կարևոր սկզբնաղբյուրներ են այս շրջանում այնտեղ գրված

---

<sup>7</sup>Մաշտոցի անվան Մատենադարան, արխիվային բաժնի, Լազարյանների ֆոնդ, թղթ. 110, վավ. 5, թ. 3-4:

<sup>8</sup>Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռգ. հմր.6377:



հայկական ձեռագրերը և վերջիններիս հիշատակարանները: Մեզ հայտնի առաջին ձեռագիրը մեծադիր «Խորհրդատետր» է ընդօրինակված 1738թ.: «Խորհրդատետրը»՝ որպես Սրբազան Պատարագի սրբազան գիրք, պահվում էր եկեղեցում: Հետևաբար 1838թ., երբ ընդօրինակվել է այն, Պետերբուրգում եղել է հայ համայնք, որը որևէ շինությունում կատարել է եկեղեցական պաշտամունքը: Ձեռագիրը ընդօրինակող գրիչը Նոր Ջուղայից եկած քահանա Տեր Հովհաննեսն է <sup>9</sup>:

Ս. Պետերբուրգում 1756թ. Աստվածատուր Շամախեցին ընդօրինակում է «Գանձարան» ժողովածուն, որն արդեն կապվում է տեղի համայնքի գրական բանաստեղծական նախասիրությունների հետ, քանի որ «Գանձարանի» կանոնները նախատեսված էին ոչ միայն եկեղեցական տվյալ տոնին երգվելու, այլև անհատական ընթերցման համար:

Արդությանի գործունեությունից հստակ երևում է, թե ինչքան սերտորեն էին իրար կապված քաղաքական և գրական գործունեությունը, որ գրականությունը պայմանավորված էր և ստուգաբանվում էր ժամանակի պատմական իրադարձություններով:

Այս գործերը լիովին տեղավորվում են կայսրական գրականության շրջանակում, որը ձևավորվեց Պետերբուրգում հայ գրողների ցարական արքունիքի հետ հարաբերությունների և այդ հարաբերությունները տարբեր նամակներով, բացատրական և ներբողական ստեղծագործություններով արտահայտելով: Հիշյալ գործերը միաժամանակ ունեին գրական որոշակի արժեք, գրված էին միջնադարյան թղթերի ջատագովական ոճով և շնչով: Դրանք անկախ իրենց ունեցած ազգային-քաղաքական նպատակներից, մասն էին կազմում ձևավորվող նոր շրջանի հայ գրականության:

## **1.2. Գրիգոր Խալդարյանի տպարանի հրատարակությունների գրապատմական արժեքը**

1779թ. Հ. Արդությանը ծանոթանում է Նոր Ջուղայում ծնված, Հնդկաստանում որոշ ժամանակ առևտրական գործունեություն ծավալած, այնուհետև Լոնդոն տեղափոխված Գ. Խալդարյանի հետ, ով դեռևս Անգլիայում մտադրվել էր կազմակերպել հայկական տպագրություն: Խալդարյանը Արդությանի հորդորով տպարանը տեղափոխում է Պետերբուրգ:

Առաջին գիրքը՝ «Աբբենարանը», ինչպես գրված է գրքի տիտղոսաթերթին, լույս է տեսնում 1781թ. դեկտեմբերի 15-ին: Հաջորդը, դարձյալ, ինչպես տիտղոսաթերթում է նշված, 1782թ. հունվարի 6-ին տպագրված «Կրթության քրիստոնէական» գիրքն է:

Անկախ նրանից, թե որքանով է գրքի տպագրությունը ճշտորեն համընկել հունվարի 6-ի հետ, Ս. Ծննդայան տոնի հետ կապվելով վերջինիս ավելի հանդիսավորություն է հաղորդվել: Ավանդական մյուս եկեղեցիները, այդ թվում

---

<sup>9</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռգ. հմր. 3807, թերթ՝ 32ա:

նաև Ռուս եկեղեցին, Ս. Ծնունդը կատարում էին դեկտեմբերի 25-ին: Հունվարի 6-ի մատնանշմամբ Արղությանը թերևս ցանկացել է ընդգծել վերջինիս կարևորությունը, որպես Ս. Ծննդյան տոնման օր:

Երրորդ գիրքը՝ «Ժամագիրքը», տպագրվել է 1783թ.: Այն ունի հիշատակարան, որը գրված է ուշ միջնադարի հիշատակարանների ոճով և կանոնավոր գրաբարով: Կառուցվածքային առումով ևս այն շարունակում էր նախորդող շրջանի հիշատակարանների ավանդները:

Այս հրատարակությունները նեղ համայնքային նպատակներ չէին հետապնդում, այլ առավել լայն ընդգրկում ունեին, նախատեսված լինելով նաև թեմի մյուս երկու կենտրոնների՝ Մոսկվայի ու Աստրախանի համար: Հետևաբար Պետերբուրգ փոխադրված Խալդարյանի տպարանի նշանակությունը դուրս էր գալիս Ռուսաստանի Հյուսիսային մայրաքաղաքի շրջանակից:

Ձեռագիր հիշատակարաններն ունեին եռամաս կառուցվածք: Նախ փառաբանական խոսք էր ուղղվում Սուրբ Երրորդությանը ձեռագրի գրության ավարտի համար, գրության հետ կապված հանգամանքներն էին ապա ներկայացվում և ընթերցողների բարեխոսությունն էր հայցվում գրչի (այս դեպքում տպագրիչների) և նրանց ողջ և հանգուցյալ հարազատների համար:

Նույն ձևով Խալդարյանը խնդրում է հիշել նաև իրեն, որ ծրագրել է տարբեր գրքեր տպագրել, որոնց համար ասում է. «(Թէ զմեկնութիւն Սուրբ Գրոց և թէ զպատմաբանութիւնս անցելոց իրաց ի ստուգագոյն օրինակաց»): Նա ներկայացնում է գրական-հրատարակչական իր ծրագիրը՝ տպագրել եկեղեցական գրականություն նախորդող շրջանի հայրերի մեկնություններով և ազգային անցյալին վերաբերող գործերը:

Հաջորդ հրատարակությունը Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» ծավալուն ստեղծագործությունն էր, որը Հին և Նոր Կտակարանների չափածո վերաշարադրանք-մեկնությունն է: Այն միաժամանակ թե կրոնական ստեղծագործություն է և թե հայ միջնադարյան գրականության ամենասիրված գործերից մեկը: Կարելի է ասել Գրիգոր Նարեկացու Մատյանից հետո միջնադարում տարածված երկրորդ ստեղծագործությունն էր: Պատահական չէ, որ այն նաև 17-18-րդ դարերում մինչև 1785թ. տպագրվել էր ութ անգամ:

Հիշատակարանի երկրորդ մասը չափածո է, որի ձևի մեջ ևս պահպանված են հիշատակարանի գրական կանոնը և հիշվում են Լազարյան տոհմի անդամները: Սույն հիշատակարանը ցույց է տալիս, որ Արղությանը ունեցել է նաև գրական որոշակի շնորհ: Որպեսզի չափածոն միապադաղ չլինի՝ հանգերը մի քանի տողը մեկ փոխվում են: *Ոյ-ին* հաջորդում է *ին-ը* և *լի-ն*:

Նույն տարում տպագրված երկրորդ աշխատանքը թարգմանական է և վերաբերվում է Աստվածաշնչում հիշված դեպքերի պատմությանը: Առաջաբանում ասում է, որ թարգմանությունը համեմատել է բնագրի հետ և իմաստային ճշտումներ կատարել: Հետևաբար, Պետերբուրգի ժամանակի գրական կյանքում ոչ միայն սկսվում է թարգմանական գործերի հրատարակությունը, այլև թարգմանությունների խմբագրական

աշխատանքները, որով թարգմանական գործը դրվում է մասնագիտական հիմքերի վրա:

Պետերբուրգի հայկական տպագրության 1785թ. վերջին հրատարակությունը ևս թարգմանական գործ է, կատարված կնոջ՝ Աննա Դիլանջյանի կողմից, սակայն արդեն վերաբերվում է Ռուսական կայսրության օրենքների: Թարգմանության որակին և բնագրային համապատասխանությանը թե որքան կարևորություն էր տրվում Պետերբուրգի հայ համայնքի գրական կյանքում, երևում է գրքի հիշատակարանից: Նախորդ հրատարակության առաջաբանում էթե կարևորվում էր իմաստային ճիշտ թարգմանությունը, ապա այստեղ նաև գրական շարադրանքը: Հայ հնատիպ գրքերում տեղ գտած հիշատակարաններում առաջին անգամ խոսվում է թարգմանությունների լեզվի ճարտասանական արվեստի մասին:

Գրավոր խոսքն անվանելով քերթության արհեստ՝ քերթողական արվեստ, նշում է վերջինիս դրսևորման երեք աստիճաններ. Բան՝ ընդհանուր շարադրանք, բառ և վերջապես հոլով, որով նկատի ունի բառերի

Թարգմանական արվեստի և գրականության տեսության հետ կապված հարցերի արծարծումը գտնում ենք Պետերբուրգի հայկական հաջորդող հրատարակություններում ևս:

1786 թվականին վերահրատարկվում է Սիմեոն Երևանցու կազմած Տոնացույցը, որը Ս. Էջմիածնում տպագրվել էր 1773թ.: Հիշատակարանում ասվում է, որ ներողամիտ լինեն գրքում տեղ գտած սխալների համար: Գրքերի հրատարակությունների հետ կապ ունեցող տարբեր անձնավորությունների կողմից ճիշտ և խմբագրված բնագրերի կարևորության ընդգծումը ցույց է տալիս, թե Պետերբուրգի հայ համայնքում որքան է կարևորվել շարադրանքի գրական և ոճական առումով ճիշտ լինելը: Գրավոր խոսքի հանդեպ նման մտահոգությունը ըստ երևույթին պայմանավորված էր Պետերբուրգի հեռավոր և փոքր գաղութում հրատարակված գրքերի միջոցով ևս հայերենը անաղարտ պահելու մտահոգությամբ:

Ինչպես հայտնի է, ուշ միջնադարյան հայ գրականության ուրույն տեսակն էր տապանաքարային կամ դամբանական անվանվող բանաստեղծությունը: Այն հիշեցնում է չափածո հիշատակարանները, ինչը պատահական չէ: Տապանագրային բանաստեղծությունը ևս չափածո հիշատակարան էր այնտեղ ամփոփված մարդու կյանքի մասին՝ գրված դրվատական և ներբողական ոճով:

Պետերբուրգի Սմոլենսկյան հայկական գերեզմանոցի հայկական տապանաքարերի շարքում ևս մեծ տեղ են գրավում չափածո տողերով և գեղարվեստական արժեք ունեցող արձանագրությունները: Այն մեկ անգամ ևս վկայում է քաղաքում եղած գրական ավանդույթի մասին: Եթե համապատասխան գրական միջավայր և ճաշակ չլիներ, ապա չէին կարևորվի նման գրությունները և հիմնական շեշտադրումը կդրվեր այդ հուշարձանների արտաքին շքեղության վրա:

Տապանագրերից երկուսը վերաբերում են Պետերբուրգի հայկական տպագրության հիմնադիր Գրիգոր Խալդարյանին և հայ գրատպության առաջին կին հեղինակներից Մարիամ Սարաֆյանին, ով առավել հայտնի է Կլեոպատրա Սարաֆյան անվամբ: Նրանց տապանաքարերի արձանագրությունները հիշեցնում են իրենց հրատարակած գրքերի հիշատակարանների կենսագրական բարեխոսականների հատվածները, ունենալով թեմատիկ նույն ընդգրկումը: Ներկայացնելով նրանց կյանքի ընթացքը, այս դամբանականները կենսագրական լրացուցիչ տեղեկություններ են հաղորդում:

Խալդարյանի 54 տողանոց դամբանականում նրա տպագրական գործունեությունն այսպես է բնութագրվում.

***Տպագրութեան հայոց կազմեալ,  
Ձանազան փառիք շքեղացուցեալ,  
Տպիք գրեանս ի լոյս ածեալ  
Ձեւ եւ բոլորն կափարեալ<sup>10</sup>:***

Խալդարյանի ծննդյան թվականի և քանի տարի ապրելու մասին տեղեկություններ հայտնի չեն: Չափաժո դամբանականում, սակայն, ասվում է.

***Կեանս վարեալ յիսունհինգ փարի:***

Վիմագրագետ Գրիգոր Գրիգորյանը նկատի ունենալով այս տողերը գրում է. «Ուսումնասիրողներին հայտնի չէ Գր. Խալդարյանի ծննդյան թվականը, սակայն վիմագրում նշված է, որ նա վախճանվել է 1787թ. 55 տարեկան հասակում: Ուրեմն նա ծնվել է 1732թ.»<sup>11</sup>:

Չափաժո հիշյալ դամբանականի գեղարվեստական կարևոր արժանիքներից է հնչողությունը նմանաձայնությամբ ձանձրալի չդարձնելու համար ի-ով և եալ-ով ավարտվող հանգերի իրար հաջորդելը:

Նույն գերեզմանոցում է հանգում նաև հայ տպագիր գրքի առաջին կին հեղինակներից և հայ ազատագրական մտքի 18-րդ դարի նշանավոր ներկայացուցիչներից Մովսես Սարաֆյանի դուստր Մարիամ Սարաֆյանը, ով հայտնի է Կլեոպատրա Սարաֆյան անվամբ, որի մասին ևս բացատրություն գտնում ենք տապանագրային արձանագրության մեջ:

Տապանաքարի 28 տողանոց չափաժո դամբանագրի առաջին չորս տողերում ներկայացվում է նրա մարմնական գեղեցկության և մտավոր արժանիքների դաշնությունը<sup>12</sup>: Հաջորդող տողերով բացատրվում է թե ինչպես է Մարիամը իր գեղեցկության համար Եկատերինայի կողմից վերանվանվել Կլեոպատրա.

***Սա սիրեցաւ ի թագուհոյ  
Եկապերին մեծ կայսրուհոյ,  
Յորմէ էառ անուն պափոտոյ  
Կլեօպափրա գեղեցկուհոյ:***

<sup>10</sup> Դիվան հայ վիմագրության, Պրակ VIII, Ռուսաստանի Դաշնություն, աշխտ. Գր. Գրիգորյանի, Երևան, 1999, էջ 83-84.:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 84:

<sup>12</sup> Նույն տեղում:

Գրի դրոշմման երեք եղանակներով՝ ձեռագրային, տպագիր և վիմական արձանագրություններ, ստեղծված գրական ստեղծագործությունները վկայում են, որ 18-րդ դարի առաջին տասնամյակներից Պետերբուրգի հայ համայնքում սկսում է ձևավորվել նաև գրական կյանքը, մի կողմից հիմնվելով ուշ միջնադարի հայ գրական և հատկապես բանաստեղծական ավանդների վրա և մյուս կողմից ազդվելով ռուսական կայսրության արքունական այն գրականությունից, որը հանդիսավոր ներբողական ոճով իր գագաթնակետին էր հասնելու Եկատերինա Երկրորդի շրջանում:

18-րդ դարի երկրորդ կեսին Պետերբուրգի հայկական համայնքի ձևավորմամբ և Լազարյանների՝ քաղաքական, Արղությանի՝ եկեղեցական և Խալդարյանի՝ մշակութային գործունեությամբ սկզբնավորվում է քաղաքի հայ գրական կյանքը:

## **ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ**

### **19- ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ**

#### **2.1. Եկատերինյան գրականության ավանդների շարունակումը 19-րդ դարի առաջին երկու տասնամյակներին**

Պայմանավորված ժամանակի եկեղեցաքաղաքական հանգամանքներով, 18-րդ դարի պետերբուրգյան հայ համայնքի գրականությանը բնորոշ էր գրականության միջոցով արտահայտել Ռուսաստանի հայությանը աջակցության և անձամբ Եկատերինա Երկրորդի հովանավորության գաղափարը: 19-րդ դարասկզբի գրականության խնդիրն է դառնում Ռուսական կայսրության, այդ թվում Կովկասի հայության՝ ռուսական կյանքում ներառվելու (ինտեգրվելու) հարցը, որը ևս իր ուղղակի արտահայտությունն է գտնում այդ շրջանում ստեղծված գրականության մեջ:

Եկատերինային հաջորդող կայսրերը քանի ու չունեին նրա վառ անհատականությունը, ուստի նրանց նվիրված գործերը ևս չունեին այն փայլը, ինչ ունեին կայսրուհուն նվիրված ստեղծագործությունները: Այս հանգամանքը արտահայտվել է նաև նույն շրջանի հայերեն գրված գործերում:

Պետերբուրգում 19-րդ դարասկզբին ստեղծված հայերեն գրական գործերում ո՛չ միայն ավանդների և թեմաների ժառանգորդություն ենք տեսնում, այլև որ ավելի խորհրդանշական է, ուղղակիորեն սերնդային ժառանգորդությունը: Ասպարեգում են և ռուսական կայսրության հետ կապն իրականացնում են Լազարյանները, իսկ Սիմեոն կաթողիկոսի փոխարեն հանդես է գալիս նրա եղբորորդի Գեորգ Խուբովը, ով ժամանակի ճանաչված հայ հեղինակներից ու հասարակական գործիչներից էր:

Խուբովը ծնվել է 1764 թ. Երևանում: Սիմեոն կաթողիկոսի հսկողության ներքո 1771-1780թթ. սովորել է Էջմիածնում: 1805թ. գնում է Ռուսաստան՝ նախ Մոզդոկ,

ապա 1810թ. Պետերբուրգ<sup>13</sup>: 1811թ. այստեղ ավարտում է «1779-1809թթ. Հայաստանի արժանահիշատակ անցքերի նկարագրությունը» աշխատությունը<sup>14</sup>: Այն հայ-ռուսական հարաբերությունների կարևոր վավերագիր է՝ գրված ակնատես հեղինակի կողմից:

Գիրքի վերջում գրեթե արհեստականորեն մի բաժին վերաբերվում է Հայոց եկեղեցու պատմությանը և Հայաստանի հետ կապվող աստվածաշնչային հիշատակներին: Հայոց եկեղեցու ավանդական պատմահայեցողությամբ նման համառոտ շարադրանքը ստուգաբանվում է կայսրական գրականության շրջանակում՝ ուղղված լինելով ռուսական արքունիքին և ռուս հոգևորականությանը: Պատահական չէ, որ այն զետեղվել է գրքի վերջում, թեև ըստ կառուցվածքի և ժամանակագրական ընթացքի, պետք է լիներ սկզբում:

Նախորդ էջերում ներկայացնելով հայերի մատուցած ծառայությունները Ռուսական կայսրությանը՝ վերջին հատվածում այն միտքն է ընդգծվում, որ այդ վաստակն ունեցող ժողովրդի եկեղեցու դավանանքը ևս չի հակասում Ընդհանրական, այդ թվում և Ռուս Ուղղափառ եկեղեցու դավանանքին:

Խուբովի հաջորդ կարևոր աշխատությունը՝ «Յաղագս վարուց և գործոց կաթողիկոսաց Էջմիածնայ (1737-1837)», որոշակիորեն հուշագրական բնույթի գործ է, որի մանրամասն նկարագրությունը կատարել է Գ. Տեր-Վարդանյանը: Մեր ուսումնասիրության տեսանկյունից կարևորվում են աշխատանքի հատկապես Եփրեմ կաթողիկոսի կաթողիկոսական հաստատման կայսրական հրամանագիրը ստանալու առիթով Ալեքսանդր Առաջինին հանդիպելուն և Պետերբուրգի հայկական համայնքին նվիրված գլուխները (պրակները)՝ «Վասն պարգևատրեալ դարձման կաթողիկոսի ի Ս. Պ. Բուրգայ» և «Վասն որպիսի ուղղորդութեան Տեառն Եփրեմայ կաթողիկոսին»<sup>15</sup>:

Մի շարք ինքնագիր ընդօրինակություններով պահպանվել է նաև նաև Խուբովի հեղինակային «Երգարանը»: 1825թ. «Երգարանի»՝ Ղզարում իր կողմից կատարված ընդօրինակությունում իր մասին գրում է՝ «յեղբորորդոյ Տեառն Սիմէօնի Մեծի Ամենայն Հայոց կաթողիկոսի»<sup>16</sup>:

Եփրեմ Ձորագեղցի կաթողիկոսին, ով կայսրական հաստատում էր ստացել Անկտ-Պետերբուրգում, անվանում է «կայսերապսակ»:

28-30-րդ երգերը գրված են Պետերբուրգում: Երգարանի մի շարք միավորներ շեշտված կրում են կայսրական գրականության կնիքը:

---

<sup>13</sup> Խուբովի կյանքի և գործունեության մասին տե՛ս **Տեր-Վարդանյան Գ.**, Գեորգ Խուբովի նորահայտ երկը իբրև XVIII-XIX դարերի Հայաստանի և հայ-ռուսական հարաբերությունների սկզբնաղբյուր, «Բանբեր Մատենադարանի», հմր. 13, Երևան, 1980, էջ 192-202:

<sup>14</sup> **Хубов Е.**, Описание достопамятных происшествий в Армении в последние 30 лет (1779-1809), СПб, 1811.

<sup>15</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռգ. հմր. 2766, թերթ՝ 172բ-175ա:

<sup>16</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Բ, Երևան, 2004, էջ 969, տե՛ս նաև Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռգ. հմր. 491, թերթ՝ 1ա:

1780-1820թթ. Պետերբուրգի հայ գրական կյանքին իր գործուն մասնակցությունն է բերում նաև Մարգար Խոջենց Երևանցին: Զմյուռնիայում լինելով Անգլիայի հյուպատոսության թարգմանիչը, խանդավառված Հովսեփ արքեպս. Արղությանի գործունեությամբ, 1780թ. գալիս է Պետերբուրգ:

Նրա ինքնագիր ձեռագրերից նվազագույնը երկուսը վերաբերում են տպագրվելիք գրքերին: Առաջինը Ֆրանցիսկոս Ֆենելոնի «Տելեմաքի պատմության» թարգմանությունն է: Թարգմանության ինքնագիր օրինակը Երևանի Մատենադարանի հմր. 2907 ձեռագիրն է: Թարգմանությունը կատարվել է պարզ գրաբարով: «Ողիսևսի որդի Տելեմաքի պատմությունը» Ֆենելոնի գրական մշակմամբ նոր շրջանի եվրոպական գրականության տարածված գործերից էր, որը մեծապես համահունչ էր այն ստեղծագործություններին, որոնք «Պղնձե քաղաքի պատմության» և համանման գործերի շարքում հիշում է Խաչատուր Աբովյանը՝ որպես ժողովրդի համար սիրելի և ընթերցված գրքեր:

Հիշյալ երկի թարգմանությունը կարելի է համարել նախաարվյանական շրջանի գրական կարևոր գործերից մեկը՝ նպատակամիտված ժողովրդային ընթերցանությանը: Եթե չլիներ նման պահանջ և գրական համապատասխան միջավայր, Մարգար Խոջենցը ձեռնամուխ չէր լինի գրքի թարգմանությանը:

Նույն նպատակին է ծառայում Մարգար Խոջենցի կողմից «Որոգայթ փառացի» 1805թ. ընդօրինակությունը: Հիշյալ գործը ներկայացնում էր ապագա Հայաստանի Շահամիրյանների տեսլականը, որն այնքան համահունչ էր 18-րդ դարակեսի հայ-ռուսական դաշնադրության այն նախագծերին, որոնք ռուսական արքունիք էին ներկայացնում Արղությանը և Լազարյանները: «Որոգայթ փառացի» Պետերբուրգյան միջավայրում տպագրության համար ընդօրինակելը այս երկի վերակերպավորումն է ժամանակի կայսրական գրականության շրջանակում:

Մարգար Խոջենցը Ս. Պետերբուրգում կազմում է արաբերենի քերականություն, որի 1810թ. ինքնագիրը պահպանվում է Երևանի Մատենադարանում: Խոջենցը կայսրական գրականությանը բնորոշ բարձր ոճով իր ձեռնարկը ձոնում է Ալեքսանդր Առաջինին՝ ընծայական հետևյալ խոսքերով. «Գերագոյն հանճար և անհամեմատ ունակությամբ», ով իր լույսը արեգակի ճառագայթներից է ստանում:

Նրա գործերի հիշատակարանները, ինչպես նաև թուրքերենից հայերեն թարգմանված 17-րդ դարի թուրք միստիկ Վեյսի Էֆենդիի «Գուշակությունների գիրքը» նույնպես ստուգաբանվում են կայսրական գրականության շրջանակում: Այս գործի՝ Խոջենցի թարգմանության Պետերբուրգի 1794թ. ինքնագրում ասվում է, որ գրքի հեղինակը 130 տարի առաջ գուշակել է Ղրիմի Ռուսաստանին միանալը: Նման գործի թարգմանությունը միանգամայն համահունչ էր ոչ միայն Եկատերինյան գրականության ոգուն, այլև Խոջենցի կողմից մարգարեական կանխասացություն է համարվում Կայսրուհու կողմից Ղրիմի գրավման:

## 2.2. Պետերբուրգի համալսարանի հայ ուսանողության գրական և հրատարակչական գործունեությունը

Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին 1828թ. միանալուց հետո Պետերբուրգի, ըստ այդմ և տեղի հայ համայնքի դերը որակական նոր աստիճանի է բարձրանում: Արևելահայ մտավորականությունը սերտորեն կապվում է ռուսական զույգ մայրաքաղաքների գրական-հասարակական կյանքին: Անդրկովկասի համար պետական ծառայողներ պատրաստելու համար այնտեղ ուսանելու են ուղարկվում հայ երիտասարդներ, որոնց նախակարապետը դառնում է Խաչատուր Աբովյանը, ում ուսումնառությունը թեև անցնում է Դորպատում, սակայն հյուսիսային մայրաքաղաքը ևս իր կարևոր ազդեցությունն է ունենում ապագա հայ մեծ Լուսավորչի վրա:

1836թ., Դորպատից հայրենիք վերադառնալու ճանապարհին, Խ. Աբովյանը հանգրվանում է Պետերբուրգում, հանդիպում է մի շարք ռուս պաշտոնյաների ու մտավորականների, այդ թվում՝ պատմաբան Ն. Կարամզինի հետ, ապա մասնակցում տեղի հայ համայնքի մի հավաքի<sup>17</sup>:

Հայ երիտասարդության հոսքը դեպի Ռուսաստան, մասնավորապես Պետերբուրգի համալսարան, առավել ուժեղացավ XIX դ. 50-60-ական թվականներից: Հայ ուսանողության բացարձակ մեծամասնությանը այս շրջանում ավելի շատ հուզում էին կրթա-մշակութային և ազգային-ազատագրական խնդիրները: Նրանց առաջադեմ մասը զինվորագրվեց հասարակական կյանքի, այդ թվում գրականության և մշակութային մյուս բնագավառների նորացման գործին և ընթացավ Աբովյանի բացաձ շավիղով:

Այդ շրջանում ձևավորված կազմակերպությունների բացարձակ մեծամասնությունը հանդես չէր գալիս զուտ քաղաքական կամ էլ միայն մշակութային գործունեությամբ, այլ համատեղում էր դրանք: Վերը նշված երկու բնագավառներում էլ տիրապետողը ազգային խնդիրներն էին:

Պետերբուրգի համալսարանի հայ ուսանողության հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի կարևոր բնագավառներից էր գրական-հրատարակչական գործունեությունը: Այդ մասին կարևոր նյութեր են պահպանվել Ռուսաստանի պետական պատմական արխիվի (Պետերբուրգ) 777-րդ ֆոնդի գործերում<sup>18</sup>:

1860-ականների սկզբին մի խումբ հայ ուսանողներ, ստեղծելով «Սանկտ Պետերբուրգի հայ ուսանողական ընկերությունը», իրենց առջև դրեցին հայերեն լեզվով գրականության, ժողովրդային ընթերցանության համար նախատեսված գրքույկների հրատարակման խնդիր: Այս ուղղությամբ աշխատանքներ կատարվեցին 70-80-ական թվականներին: Մինչև 1887թ. ուսանողական ընկերության կողմից զանգվածային ընթերցանության համար հրատարակվեցին

<sup>17</sup> Հայոց գրականության պատմություն, հտ. 3, Երևան, 2015, էջ 128:

<sup>18</sup> Մանուկյան Բ., Պետերբուրգի և Մոսկվայի համալսարանների դերը հայ մտավորականության պատրաստման գործում, Երևան, հտ. Ա, 1997, էջ 17-18:



մի շարք գրքույկներ, որոնց թեմատիկան որոշակիորեն խոսում է ընկերության քաղաքական հայացքների և հետապնդած նպատակների մասին: Հրատարակված վիպակները ու պատմվածքները թարգմանական են և նվիրված են ազգային-ազատագրական պայքարին թեմային:

Հրատարակված գրքույկների տպաքանակը (3000-ական օրինակ) թույլ է տալիս կարծելու, որ դրանք որոշակի դեր պետք է խաղային այդ հարցում հասարակական կարծիքի ձևավորման գործում: Ցավոք, մատենաշարի հրատարակումը շուտով արգելվեց:

Ղազարոս Աղայանը 1862-1867թթ. գրաշար է աշխատել Մոսկվայում և Պետերբուրգում: Իր հուշերում Պետերբուրգում 1864թ. ստեղծված ուսանողական խմբի անդամների՝ այնուհետև Կովկասում ծավալված գործունեության մասին գրում է. «Սույն խումբը դեռևս Պետերբուրգում ուներ իր ապագա գործունեության ձգտումը: Այնտեղ դասագրքեր պատրաստելու հոգս էին քաշում, հորինում և թարգմանում էին. հետևում էին կրթական գործին, ուստում էին ծառայել ազգի մտավոր և բարոյական զարգացմանը փոխադարձ ձեռնտվությամբ»<sup>19</sup>:

1887թ. ուսանողական հրատարակությունների գործը շարունակեց Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետի սան Սիմեոն Գյուլամիրյանը, որի նախաձեռնությամբ սկսեց հրատարակվել «Արաքս» գրական-գեղարվեստական նկարագարող կիսամյա հանդեսը: Այն լույս էր ընծայվում տարեկան երկու անգամ՝ յուրաքանչյուրը 15 մամուլ ծավալով:

Առաջին համարի խմբագրականում ներկայացված են պարբերականի հրատարակման նպատակները: Ընդգծվում է հանդեսի համահայկական ընդգրկում ունենալը, որում տպագրվելու էին արևմտահայության և տարբեր երկրներում ապրող հայերի վիճակի մասին նյութեր:

Հրատարակվել սկսող պարբերականի համար ողջույնի խոսք է գրել Մկրտիչ Ա Խրիմյանը: Այն, սակայն, ավելի շատ ողբախառն բնույթ ունի, որովհետև խոսքի գրությունը համընկել է Ջեյթունում բռնկված սոսկալի հրդեհի հետ: Խրիմյանը դառնությամբ նախ ասում է. «Թողլով կենդանիները մեռել կ'թաղեմ, զի մեր աշխարհի մեռելոց աշխարհ է»<sup>20</sup>:

Նկատի ունենալով, որ Պետերբուրգը Նևայի ափին է և տպագրվող հանդեսի անունը «Արաքս» է, գրում է. «Ո՛հ հայու տարագիր որդիքներ, Նեվա գետին Երասխ կ'իջեն: Կ'օրինեմ ձեր այդ ձեռնարկ, որ յաջողիք արդիւնաշատ գործել»: Մաղթելով, որ նոր տպագրվող հանդեսն իր մասնակցությունը բերի Ջեյթունի վերաշինությանը, դարձյալ խոսքը կառուցում է հանդեսի անվանումը նկատի ունենալով. «Երասխիդ գետով ջո՛ւր հասուր, ջո՛ւր, որ մարենք Ջեյթունին կրակ և վերստին կանաչեն Ջեյթունին խանձողած մարդատունկ անտառներ»:

<sup>19</sup> Աղայան Ղ., Երկերի ժողովածու, Երևան, 1973, էջ 430:

<sup>20</sup> «Արաքս», Ս. Պետերբուրգ, 1887, գիրք Ա, էջ 145:

1887թ. Սանկտ-Պետերբուրգի Ի. Ն. Սկորոխոդովի տպարանում լույս է տեսնում Ղազարոս քահանա Հովսեփյանի ձայնագրած «Քնարիկ. մանկական երգեր, պարերգեր և աղոթքներ փոքրահասակ մանուկների համար» ժողովածուն:

1868թ. Պետերբուրգի Օ. Ի. Բակստի տպարանում Մ. Մ. Մինասարյանցի խմբագրությամբ լույս է տեսնում «Քնար Հայկական» ժողովածուն: Առաջաբանում նա նշում է, որ այս ժողովածուն հրատարակել է աշխարհի տարբեր կողմերում ցրված հայերի համար: Հետևաբար վերջինիս հրատարակությունը միայն տեղի գաղութի շրջանակով չէր սահմանափակվում, այլ ուներ համահայկական ընդգրկում:

1884-1887թթ. Պետերբուրգի Ի. Ն. Սկորոխոդովի տպարանում Խորեն ծ. վարդապետ Ստեփանեի խմբագրությամբ հրատարակվում է «Մանկավարժոց» մանկավարժական և գրական ամսագիրը: Գրական բաժնում տեղ էին գտնում մատենագրական բնույթի փոքրիկ հոդվածներ, հիշատակարաններ, աշխարհագրական, կենսագրական հոդվածներ, տեղագրական գործեր և այլն:

19-րդ դարի երկրորդ կեսին Պետերբուրգում գրական-հրատարակչական գործունեությունը իրականացվել է Պետերբուրգի համալսարանի հայ ուսանողների և շրջանավարտների ուժերով: Այն իր նշանակությամբ ձեռք է բերել համահայկական ընդգրկում և նպաստել ազգային ինքնագիտակցության բարձրացմանը:

### **2.3. Պետերբուրգը Պատկանյանների կյանքում**

Հայ եկեղեցուն, գրականությանը և հայագիտությանը մատուցած ծառայություններով առանձնանում է Պատկանյանների գերդաստանը: 1889թ. մայիսի 23-ին Կ. Պոլսի Ղալաթիայի թաղամասի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում Կ. Պոլսի պատրիարք Մաղաքիա եպս. Օրմանյանը Գաբրիել Պատկանյանի վախճանման աղիթով հոգեհանգստյան կարգ է կատարում: Ցանկանալով ընդգծել այս գերդաստանի տարբեր սերունդների ներկայացուցիչների ունեցած վաստակը, սերունդների հաջորդականությունը խորհրդանշող հետևյալ բնաբանն է ընտրում Օրմանյանը. «Պսակ ծերաց որդիք որդւոց, պարծանք որդւոց՝ հարք իւրեանց»: Ասում է, որ կատարվող հոգեհանգստով ոչ միայն հանգուցյալի հիշատակն են հարգում, այլև 200 տարվա քահանայական գերդաստանի<sup>21</sup>:

Հայ գրականության անդաստանում այս գերդաստանից հիշատակելի են հատկապես Գաբրիել, Ռաֆայել և Քերովբե Պատկանյանները, որոնց երեքի կյանքի ու գործունեության որոշակի շրջանները կապվում են Պետերբուրգի հետ:

Առաջիններից մեկը, ով զգաց Պատկանյանի տաղանդը, Լազարյան ճեմարանի դասախոս Ստեփանոս Նազարյանն էր: ճեմարանի աշակերտներին

<sup>21</sup> Տե՛ս «Արծազանք», Թիֆլիս, 1889, հմր. 15:

կարդալով Պատկանյանի աշխարհաբար պոեմները, Նազարյանը դրվատում է հեղինակի հայրենասիրությունը, բանաստեղծությունների գեղեցկությունը և մատչելի լեզուն<sup>22</sup>:

Համալսարանի ուսանողության շրջանում տիրող ազատասիրական ոգին, ուսանողական բազմաթիվ խմբակներում քննարկվող, ժամանակի առաջավոր մտավորականությանը հուզող հարցերով են տոգորվում նաև ռոմանտիկական երազներով ապրող հայ ուսանողները, որոնք ևս մտածում են իրենց խմբակը կազմելու մասին: Մտերմանալով պատմության բաժնի ուսանող Գևորգ Քանանյանի և բժշկության բաժնի ուսանող Մնացական Թիմուրյանի հետ, Պատկանյանը որոշում է հիմնել մի ընկերություն, որը հնարավորություն կտար լուսավորություն տարածելու միջոցով ազգը կրթել հայրենասիրական գաղափարներով, համախմբելով նրան ընդհանուր համազգային խնդիրների շուրջը: Որոշում է հրատարակել մի պարբերական և նրա էջերում լույս ընծայվող բանաստեղծություններով, ընթերցանության հանրամատչելի նյութերով օրըստօրե լայնացնել ապագա ընթերցողների մտահորիզոնը: Հրատարակվելիք պարբերականի անունը պետք է կազմվեր երեք ընկերների անվան սկզբնատառերից և «ա» հոդակապից ու ազգանունների առաջին վանկերից. «Գ-Գևորգ, Մ- Մնացական և Ռ-Ռափայել, **Գամառ, ՔաՔանանյան, Թի-Թիմուրյան, Պա-Պատկանյան-Քաթիպա**»: Այսպես ծնվեց **Գամառ Քաթիպա** անունը, որը հետագայում նույնանալով ազգային բանաստեղծի հետ, դարձավ հայ ժողովրդի սիրելի անուններից մեկը:

1857թ. Պատկանյանը անդամակցեց Պետերբուրգի հայ մտավորականության ամենաըմբոստ թևի ղեկավարներից մեկի՝ Մովսես Բուդաղյանի՝ «Երիտասարդ Իտալիա» հայտնի կազմակերպության օրինակով ստեղծված «Երիտասարդ Հայաստան» խմբակցությանը, որի վերջնական նպատակն էր Հայաստանի ազատագրումը:

1861թ. նա դիմում է Պետերբուրգի գրաքննչական կոմիտեին «Հյուսիս» վերնագրով հայերեն թերթ հրատարակելու թույլտվություն ստանալու խնդրանքով՝ միաժամանակ կոմիտեին ներկայացնելով հրատարակվելիք թերթի ծրագիրը: Պատկանյանին հաջողվեց ստանալ իշխանությունների թույլտվությունը և արդեն 1863 թ. թերթը լույս ընծայել: Այն դարձավ Պետերբուրգի առաջին հայերեն պարբերականը և հրատարակվեց շուրջ մեկ տարի: Լրագիրը, ներկայացված ծրագրի համաձայն, լույս էր ընծայվում շաբաթը մեկ անգամ: Լեզուն հիմնականում աշխարհաբարն էր, չնայած առանձին դեպքերում տպագրվում էին հոդվածներ նաև գրաբարով և ռուսերենով:

«Հյուսիս» շաբաթաթերթի էջերում մանրամասն նկարագրվում էին Ջեյթունի հերոսամարտի տարբեր դրվագները: Ռուսահայ միջավայրի ո՛չ մի պարբերական այնքան տեղ չի հատկացրել Ջեյթունի ապստամբությանը, որքան

<sup>22</sup> Սադյան Մ., Պատկանյաններ, Երևան, 1982, էջ 127:

կարճատև կյանք ունեցած «Հյուսիսը», որովհետև Ջեյթունի հերոսամարտը մարմնավորումն էր Պատկանյանի փայփայած գաղափարների:

«Հյուսիսի» նվիրված թղթակիցներից էր Պատկանյանի հայրը՝ ծերունի Տեր-Գաբրիելը՝ իր չափաբերական և արձակ գրվածքներով, որոնցից հիշարժան է «Վարդան Մամիկոնյան» պատմական բանաստեղծությունը, «Լեհաստանի հայերի թշվառությունները» ուսումնասիրությունը և այլն:

Չնայած Պատկանյանի գործադրած ջանքերին, թերթը մեծ հաջողություն չունեցավ: 1864թ. այն դադարեց լույս տեսնել՝ չկարողանալով բավարարել ժամանակի գրական և հասարակական պահանջներին:

#### **2.4. Միքայել Նալբանդյանի Պետրոպավլովյան նամականին և ստեղծագործությունները**

Նալբանդյանը 1859թ. հոկտեմբերի վերջին մեկնում է Պետերբուրգ, որտեղ մնում է ավելի քան յոթ ամիս: Այդ ժամանակահատվածում որպես ազատ ունկնդիր, նա դասախոսություններ է լսում համալսարանի Արևելյան լեզուների ֆակուլտետի հայ-վրաց-թաթարական բաժնում, և եռանդուն կերպով պատրաստվում է ընունելության քննություններին:

Պետերբուրգի հետ է կապվում Նալբանդյանի կյանքի վերջին շրջանը: Ռ. Պատկանյանի նման Նալբանդյանը ևս Պետերբուրգ է փոխադրվում Մոսկվայից, դարձյալ ռուս առաջադիմական մտավորականության միջավայրում ձևավորված աշխարհայացքով: Մոտ երեք տարի, մինչև 1865թ. մայիսը, Նալբանդյանը փակված մնաց Պետերբուրգի Պետրոպավլովյան բանտում: Նա մեղադրվում էր Լոնդոնի ռուսական վտարանդիության կամ ինչպես ասված էր մեղադրական գործում՝ «Լոնդոնի պրոպագանդիստների» հետ հարաբերություն ունենալու մեջ:

Ինչպես երևում է Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունից, նրա կյանքի վերջին՝ Պետրոպավլովյան ամրոցում և մի կարճ ժամանակ Պետերբուրգում անցկացրած շրջանից, այն գրական-հասարակական գործունեության առումով շարունակել է լինել բավականին բուռն: Նալբանդյանը հետաքրքրվել է հայ, ռուս և համաշխարհային գեղարվեստական, ինչպես նաև հասարակագիտական գրականությամբ: Նալբանդյանի համար անհանգստացել են ժամանակի ռուս հեղափոխական-դեմոկրատները և «Լոնդոնի խմբակի» անդամները<sup>23</sup>:

60-ական թվականների սկզբից հեղափոխական շարժման ճնշման տակ ցարական կառավարությունը ստիպված մեղմում է Պետրոպավլովյան բերդի ռեժիմը և թույլատրում է բանտարկյալներին գրքեր ստանալ և մտավոր աշխատանքով զբաղվել՝ Երրորդ բաժանմունքի և բանտային վարչության խիստ հսկողության ներքո: Օգտվելով ընձեռված հնարավորությունից՝ Նալբանդյանն

---

<sup>23</sup> Տե՛ս **Ինճիկյան Ա.**, Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրություն, Երևան, 1980, էջ 209-304:

ամբողջովին նվիրվում է ընթերցանությանն ու գրական աշխատանքին: Նա կարդում է գիշեր-ցերեկ, եղբոր միջոցով ընկերներին պատվերներ է տալիս՝ նշելով իրեն անհրաժեշտ գրքերը:

Պետրոպավլովյան ամրոցում նա գրել է «Կրիտիկա Սոս և Վարդիթերի», «Հեզելը և նորա ժամանակը», «Մեր լեզվի արմատական բարեփոխության փորձը», «Ազգային թշվառություն», «Աղցմիք» երգիծական բանաստեղծությունների շարքը, «Հիշենք» և «Մամիկոնյան մեծ Վահանի պատասխանը» ծաղրանմանությունները, «Կայսակ» պոեմը, մի քանի հոդվածներ և հարյուրից ավելի նամակներ, որոնցից մեզ են հասել քսաներկուսը:

Նախախորհրդային տարիներին Նալբանդյանի գրական ժառանգության անձանոթ էջերից առավել հանգամանորեն հետազոտվել և հնարավորին չափ խնամված հրատարակության է արժանացել միայն «Աղցմիք» ժողովածուն: Այն ներառում է գրաբար 12 բանաստեղծություն և չափածո մի մեծ ստեղծագործություն՝ «Արկածք նախահորն» վերնագրով, որի տպագրությունն, ըստ Շահագիզի, «ֆուրոր»,<sup>24</sup> պիտի լիներ:

Հեղինակը մի քանի անգամ փոխել է ստեղծագործության սյուժետային կառուցվածքը: Ծանոթանալով «Մայրական սեր» ֆրանսիական գրքույկի բովանդակությանը, Նալբանդյանը սկզբնապես նպատակ ուներ ցույց տալ հայ մայրերի ու քույրերի նահատակության և հերոսությունների պատկերները: «Աղցմիքը» սկսում է Եղիշեի երկից կատարած քաղվածքներով ու վերլուծությամբ: Այնուհետև Նալբանդյանը գրում է պոեմի մի քանի սկզբնական հատվածներ, որոնք նվիրված էին Տիրամորը: Վկայակոչելով շարքի նախաբանի՝ «Ուղերձի» բնաբանը, Պ. Հակոբյանը գրում է, որ այն պարոդիա է՝ գրված Գալֆայանի դեմ: Նշում է, որ «Վարդենիքի» երգերը բնաբաններ ունեն ռուս և եվրոպացի հեղինակներից, ուստի ծաղրանմանակման սկզբունքով Նալբանդյանն է բնաբաններ է ընտրել իր նախասիրած հեղինակներից:

«Աղցմիքի» բնագիրը հրատարակության պատրաստած Ն. Մուրադայնը ծանոթագրություններում գրում է, թե շարքի որ բանաստեղծությունը և տարբեր բանաստեղծությունների տողերը Գալֆայանի գործի որ բանաստեղծության կամ տողի ծաղրանմանակությունն են<sup>25</sup>: Ծանր գրաբարով գրված այս շարքը առանձնանում է Նալբանդյանի մյուս ստեղծագործություններից: Ինչպես որ Գալֆայանն է գրել գրաբար, խրթին գրաբարի միջոցով Նալբանդյանը ծաղրել է վերջինիս անգամ բանաստեղծական լեզուն և ոճը:

Պետրոպավլովյան բերդից դուրս գալուց հետո և մինչև քստրավայր մեկնելը՝ Պետերբուրգում, ծանր հիվանդ վիճակում Նալբանդյանը թարգմանում է Ղազար Փարպեցու «Թուղթը»՝ կից ծանոթագրություններով: Գրում է Վարդան

<sup>24</sup> «Լուսն» , 1900, Ա գիրք, (1 կիսամյակ), էջ 353:

<sup>25</sup> Տե՛ս Նալբանդյան Մ., Երկերի լիակատար ժողովածու վեց հատրով, հտ. 1, Երևան, 1979, էջ 445-446:

պատմիչի «Տիեզերական պատմություն» Ղ. Ալիշանի Վենետիկի հրատարակության առթիվ «Նկատողություն» հոդվածը:

1865թ. նոյեմբերի վերջերին, Նալբանդյանը հարկադրված մեկնում է իր համար սահմանված քաղաքավայրը, ուր և վախճանվում է 1866թ. մարտի 31-ին:

Քերովբե Պատկանյանով փակվեց ռուսական հայագիտության ավանդական կամ դասական շրջանը, որին 19-րդ դարավերջից հաջորդելու էին Ն. Մառը և Հ. Օրբելին՝ հիմք դնելով քննական կամ նոր շրջանի հայագիտությանը, որի ավանդները շարունակվում են մինչև այսօր:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

### ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐԻՆ

#### 3.1. Պետերբուրգի հայ գրական կյանքը 20-րդ դարակզբին

Պետերբուրգի «Պուշկինեան» տպարանում 1903թ. հրատարակվում է Հ. Քրիստափորյանի «Փնջիկ երգարան» ժողովածուն, ուր տեղ են գտել հեղինակի տիկնոջ՝ Իսկուի Քրիստափորյանի սիրած երգերն ու շարականները:

Վերջինիս քննությունը ցույց է տալիս, որ դրանցում հիմնականում արծարծվում է պայքարի միջոցով ազատություն ձեռք բերելու գաղափարը: «Փնջիկ» երգարան ժողովածուն կարելի է դիտել ո՛չ միայն հեղինակի տիկնոջ հիշատակը հավերժացնող հրատարակություն, այլև՝ պետերբուրգաբնակ հայերի հայրենասիրական զգացումների արտահայտություն:

Հայ գրական կյանքի նշանակալից երևույթ էին Ն. Ադոնցի խմբագրությամբ 1903-1904թթ. լույս տեսած «Բանբեր գրականության և արվեստի» հանդեսի երկու հատորները, որոնցում տպագրվում են Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Վրթ. Փափագյանի և մի շարք այլ հեղինակների արձակ և չափածո ստեղծագործությունները:

1906-1907թթ. Պետերբուրգի «Պուշկինյան արագատիպ» տպարանում լույս է տեսնում հրատարակիչ Դավիթ Օքրոյանի և խմբագիր Բ. Գալստյանի «Սափրիչ» գրական երգիծական պատկերազարդ ամսաթերթը: Պետերբուրգի Արևելյան ձեռագրերի ինստիտուտում առկա են ամսաթերթի 12 համարները: Առաջին համարը, որպես բնաբան ունի հետևյալ տողերը.

*Գործս դժուար,*

*օգուտը՝ քիչ,*

*Բայց ի՛նչ արած՝ իբրև սափրիչ,*

*Համբերութեամբ պետք է մաքրեմ*

*Ամեն մի կեղտ այս մեր կյանքում:*

Նկատի ունենալով Ռ. Պատկանյանի «Հյուսիս», Ս. Գյուլումյանի «Արաքս», «Մանկավարժոց», Ն. Ադոնցի «Բանբեր», Դ. Օքրոյանի «Սափրիչ» թերթերը և հանդեսները, Վ. Բարխուդարյանը գրում է. «Դրանցում հասարակական-քաղաքական հիմնախնդիրները, դրանց քննարկումները երկրորդական պլան էին մղված: Այդ պարագան, անշուշտ, պայմանավորված էր կառավարության

կողմից կիրառվող քաղաքականության՝ սահմանված գրաքննչական խիստ կարգով»<sup>26</sup>:

Ասվածը վերաբերվում է Պետերբուրգում գործած գրական-հասարակական կազմակերպություններին ևս, որոնց նպատակն էր կազմակերպել թե՛ մայրաքաղաքի մտավոր-հասարակական կյանքը և թե՛ աջակցել կովկասահայության գրական-մշակութային գործունեությանը:

### **3.2. Թումանյանի դատավարությունը, հանդիպումներն ու ելույթները Պետերբուրգում**

Թումանյանի անունով հատուկ մեղադրական գործ չի պահպանվել ո՛չ Վրաստանի պետական կենտրոնական արխիվում և ո՛չ էլ Պետերբուրգի ոստիկանական դեպարտամենտի հատուկ բաժնի ֆոնդում: Նյութերը ամփոփված են «Դաշնակցության գործ» ընդհանուր խորագիրն ունեցող մեղադրական գործի տարբեր տարիների թղթապանակներում<sup>27</sup>:

Պետերբուրգի սենատի հատուկ կարգադրությամբ Թումանյանին երկրորդ անգամ բանտարկեցին 1911թ. հոկտեմբերի 31-ին: 40 օր բանտում մնալուց հետո Թումանյանը 1911թ. դեկտեմբերի 14-ին մի խումբ կայանավորների հետ ապրանքատար վագոնով ուղարկվեց Պետերբուրգ<sup>28</sup>:

Մարտի 20-ը դատավարության վերջին օրն էր: Դատավոր Կրիվցովը առաջարկեց ազատ արձակել 94 հոգու, այդ թվում՝ Թումանյանին:

Դատավարության ավարտից հետո մի քանի օր Թումանյանը մնաց Պետերբուրգում, որտեղ առիթ ունեցավ ծանոթանալու ռուս գրողների, նկարիչների և ռուս հասարակության տարբեր դեմքերի հետ: Տպավորիչ էր մեծ հայագետ Ն. Մառի հետ ունեցած հանդիպումը: Կալանքից ազատվելուց մի քանի օր հետո Թումանյանը գրում է «Հայոց պատմություն» և «Հայագիտության ազգային ֆոնդ» հոդվածները:

Թումանյանի անձնական ծանոթություններից մեկը Վլադիմիր Գալակտիանովիչ Կորոլենկոյի հետ էր: Թումանյանը հիացմունքով է խոսել Կորոլենկոյի մասին՝ բնութագրելով նրան որպես ռուս մտավորականի, լայնասիրտ, պարզ, մաքուր, ժողովրդից դուրս եկած, բարի ու պայծառ անձնավորություն:

Պետերբուրգի իր բանտախցում (N 121) դատական նիստերից առաջ և հետո, առավոտյան մինչև ժամը 12-ը և երեկոյան ժամը 7-ից հետո, Թումանյանը բավականին հետաքրքիր գրառումներ է կատարել օրագրում:

<sup>26</sup> **Բարխուդարյան Վ.**, Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների պատմություն (XVIII դարի կես-XX դարի սկիզբ), Երևան, 2010, էջ 313:

<sup>27</sup> Թումանյանի պետերբուրգյան դատավարության մասին տե՛ս **Հովհաննիսյան Ս.**, Հովհաննես Թումանյանի կյանքի ու ստեղծագործության պատմությունը (1900-1912թթ.), Երևան, 2012, էջ 642-681, տե՛ս նաև նույն հեղինակի «Жизнь Ованеса Туманяна», Ереван, 2019, стр. 203-221.

<sup>28</sup> **Թումանյան Ն.**, Հուշեր և զրույցներ, Երևան, 1987, էջ 95:

Վերջինս արտացոլում է ինչպես 1905-1906թթ. Թումանյանի ծավալած ազգային գործունեության տարբեր մանրամասներ, այնպես էլ բանաստեղծի գրական հետաքրքրություններն այդ շրջանում: Բանտի օրագրում տեղ են գտել բանաստեղծի՝ իր դատապաշտպան Օսկար Գրոլզենբերգին նվիրված բանաստեղծությունը՝ «Երկու Հոգի» և «Вечерний звон»-ի տողացի թարգմանությունը: Բանտի օրագրում եղած գրառումները, սակայն, հիմնականում ինքնակենսագրական բնույթի են<sup>29</sup>:

### **3.3. Վահան Տերյանի և Եղիշե Չարենցի գրական գործունեության պետերբուրգյան շրջանը**

Տերյանի կյանքի և ստեղծագործության մեջ կարևոր տեղ ունի պետերբուրգյան շրջանը, որը փաստորեն կարելի է «Երկիր Նաիրիի» և «Ոսկե շղթայի» շրջան կոչել: Տերյանը Պետերբուրգ եկավ 1913թ. աշնանը՝ որպես տեղի համալսարանի արևելյան լեզուների և գրականության ֆակուլտետի ուսանող: Բանաստեղծի կյանքի պետերբուրգյան շրջանը ընդգրկել է 1913-1917 թվականները և էապես տարբերվում է նախորդ՝ մոսկովյան շրջանից:

Մառի օժանդակությամբ Տերյանը ընդունվում է Պետերբուրգի պետական համալսարան: Տերյանի փաստաթղթերում պահպանվել է Մառի այցետոմսը, որի մյուս երեսին Մառի ձեռագիրն է. «Ինդրում եմ չմերժել խորհուրդներով ու ցուցումներով այս անձնատոմսը ներկայացնող Վահան Տերյանին, ով ութ կիսամյակ ունկնդրել է Մոսկվայի ֆիլոլոգիական ֆակուլտետում, և ցանկանում է մտնել Արևելյան լեզուների ֆակուլտետը»<sup>30</sup>:

Նյութական դժվարություններին գումարվում էր նաև օտար միջավայրում, հայրենիքից հեռու գտնվելու կարոտը: Պետերբուրգյան ապրումները Տերյանը խտացրել է «Պետերբուրգ» (1914) բանաստեղծության մեջ<sup>31</sup>.

1913թ. ամռանը գրած մի նամակում նա կատակով ստորագրել է. «Վահան, Դուքս երկրի Նաիրի, որին Տերյանն այժմ երգում է»<sup>32</sup>: Սա ուղղակի ակնարկ է «Երկիր Նաիրի» շարքի մասին, որի հղացումը կապված է այդ ժամանակաշրջանի հետ:

Տերյանի ստեղծագործական կյանքում պետերբուրգյան շրջանը դարձավ թեմատիկ, ժանրային, ստեղծագործական որոնումների շրջան, որոնց արդյունքում էլ ծնվեցին «Ոսկե շղթա», «Կատվի դրախտ», «Երկիր Նաիրի» շարքերը: «Ոսկե շղթան» առաջին անգամ տպագրվեց Պ. Մակինցյանի կազմած «Երկերի ժողովածուի» 3-րդ հատորում հետևյալ ծանոթագրությամբ. «Այս վերնագիրը պոետի թղթերում գոյություն չունի: Սակայն իր զրույցներում նա հաճախ հիշատակում էր հենց այդ վերնագիրը: Անգամ մտադիր էր իր նոր գրքի

<sup>29</sup> Տե՛ս **Հովհաննիսյան Ս.**, Հովհաննես Թումանյանի կյանքի ու ստեղծագործության պատմությունը (1900-1912թթ.), էջ 650:

<sup>30</sup> Տե՛ս **Պարտիզունի Վ.** Տերյանի կենսապատումը, էջ 218:

<sup>31</sup> **Տերյան Վ.**, Երկերի ժողովածու, հտ. 3, Երևան, 1973, էջ 30:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 98:



շապիկը նկարագարողել փշերով հյուսած ոսկե շղթայով»<sup>33</sup>: Այս շարքին առնչվող Տերյանի տետրում հավաքված 10 տրիոլետներից 7-ը դասավորված են իրար ետևից և համարակալված են արաբական թվերով: Դրանով իսկ բանաստեղծն ընդգծել է այդ գործերի թեմատիկ ու ռճական միասնությունը, որով նրանք մի յուրօրինակ ենթաշերտ են կազմում և մեզ ներկայանում են իբրև միևնույն թեմայի աստիճանական զարգացման ու ծավալման արտահայտություն:

Պետերբուրգյան ժամանակահատվածում ստեղծված առավել նշանակալի աշխատանքը պետք է համարել «Երկիր Նաիրի» շարքը: Հայ հին մատենագրության ուսումնասիրության շնորհիվ նա վերհանեց և բանաստեղծական շունչ հաղորդեց Հայաստանի հին անվանումներից մեկին: Հայ գրականությունում Նաիրի անունը դարձավ հայրենիքի գեղարվեստական խորհրդանիշ:

Մ. Գորկու հետ Տերյանի ծանոթությունն ու աշխատանքը կազմում են բանաստեղծի կյանքի պետերբուրգյան շրջանի կարևոր էջերը: Այդ ծանոթությունը դրական է անդրադարձել Տերյանի գրական-հասարակական գործունեության վրա՝ բացելով ստեղծագործական նոր հորիզոններ: Մ. Գորկին 1915թ. նախաձեռնել էր «Հայ արձակի ժողովածուի» նախապատրաստման աշխատանքը, և որպես օգնական ընտրում է Վ. Տերյանին: Համատեղ աշխատանքը մտերմացնում է գրողներին: Տերյանը լինում է նաև Գորկու՝ Ֆինլանդիայում գտնվող ամառանոցում, որտեղ հանդիպում է մի շարք հայտնի գրողների ու մտավորականների: Նրանցից բանաստեղծ Գ.Ն. Սեմյոնովսկին, Գորկու մասին գրած իր հուշերում խոսում է նաև Տերյանի մասին: Սեմյոնովսկին վերհիշում է Գորկու և Տերյանի զրույցը գրականության և «Հայ գրականության ժողովածուի» մասին:

Հայ ժողովրդի համար ողբերգական այդ շրջանում Տերյանը անչափ կարևորում էր Բոլյուսովի և Գորկու կազմած ժողովածուների հրատարակումը:

Հին Պետերբուրգը և նոր Լենինգրադը շրջադարձային եղան նաև երիտասարդ Չարենցի համար: Լենինգրադում գրած բանաստեղծություններում նա կրկին անդրադառնում է հեղափոխական թեմաներին: Լենինգրադյան ծոներում ասես հյուսվում է հեղափոխության էպիկական պատմությունը: Նկարագրվում է Ձմեռային պալատի ներքնահարկում դեկաբրիստների հարցաքննությունը պորփյուրակիր արքա-արևելյնի կողմից («Ձմեռային պալատի ներքնահարկում»):

«Հոկտեմբեր 25-26 1917» բանաստեղծության մեջ պատկերվում են Լենինգրադի հոկտեմբերյան դեպքերը, երբ ահը պարուրել էր հին քաղաքը, սպառնում էր հին վարչակարգին, և հնչում են «Ավրորայի» համազարկերը

Բոլշևիկների «հորդան» կործանեց պալատների տերերի աշխարհը: Հնի ու նորի հակադրության ու նորաստեղծ աշխարհին ձոն է «Թուղթ Ակսել Բակունցին, գրված Լենինգրադից» բանաստեղծությունը:

<sup>33</sup> Տերյան Վ., Երկերի ժողովածու, հտ 1, Երևան, 1972, էջ 342:

Լենինգրադում դեռ կենդանի էր հեղափոխության շունչը, ամեն ինչ երիտասարդ բանաստեղծին հիշեցնում էր ոչ վաղ անցյալի դեպքերը: Պետրոպավլովյան ամրոցում նրա առաջ տեսլանում են հեղափոխության մարտիրոսները՝ դեկաբրիստները «եղերական ու սուրբ կերպարանքով», մտաբերում է նրանց հերթով: Եվ այստեղ անսպասելի հառնում է մի կերպար, որին մոռացել էր նոր մեծ առօրյայի բովում.

*-Ի՞նչ է,- ասում է,- չե՞ք մտաբերում  
Տարիներում այն մութ իմ բարբառած  
Շոնդալից երգերն ըմբոսպության մասին:-  
Մաքառելով անցա ուղին ես իմ,  
Պայքարելով այն սև բռնության դեմ՝<sup>34</sup>:*

Լենինգրադյան կարճ շրջանում ամբողջականացած «Էպիկական լուսաբաց» ժողովածուն Չարենցի ստեղծագործական կյանքում ազդարարեց միանգամայն նոր սկիզբ և հաղորդեց միանգամայն այլ որակ: Կարելի է ասել՝ Լենինգրադի քաղաքային բնորոշ շունչն ու ներքին կյանքը Չարենցին «վարակեցին» նոր գաղափարներով ու մտքերով

### **3.4. Պետերբուրգի հայագիտական դպրոցը**

Պետերբուրգում են պատմագիտական մտքի նրբություններին տիրապետել ականավոր հայ պատմաբաններ Ն.Գ. Ադոնցը և Հ. Ա. Մանանդյանը:

Հ. Օրբելու անունը Մառից հետո անխզելիորեն կապվում է Անիի հետ, ուր 1906թ. մասնակցեց Ն. Մառի իրականացրած պեղումներին<sup>35</sup>: Օրբելու վաստակը մեծ է նաև հայկական էպոսի հազարամյա հորեյանի Մոսկվայում կազմակերպված հանդիսության շոնդալից հաջողության գործում:

Օրբելին զբաղվել է հայ պատմագրության երկերի թարգմանությամբ, ամբողջապես թարգմանելով Եղիշեի գործը, ապա Ղազար Փարպեցու Պատմության երկրորդ դրվագը, ծավալուն հատվածներ Թովմա Արծրունուց և Հովհան Մամիկոնյանից: 1971թ. Եղիշեի թարգմանությունը լույս է տեսել առանձին գրքով:

Ն. Յա. Մառի հայագիտական գործունեությունը սկսվել է 1890 թվականից, երբ նա գործուղվել է Էջմիածնի և Սևանի մատենադարանների հայկական ձեռագրերն ուսումնասիրելու: 1891թ. նա Պետերբուրգի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչն էր:

Մառը մոտ 14 տարի պեղումներ է կատարել Անիում և միջնադարյան հայ մշակույթի բարձրակետը եղող այս հրաշալի քաղաքը, թեկուզ և ավերված, Մառի պեղումների շնորհիվ վեր է հառնում ողջ շքեղությամբ ու հարստությամբ:

<sup>34</sup> Չարենց Ե., Երկերի ժողովածու, հտ. 4, էջ 84:

<sup>35</sup> Юзбашян К., Академик Иосиф Абрамович Орбели. 1887—1957. М., 1986 с. 14.

Մառը սերտորեն կապված էր հայ մշակույթի բազմաթիվ գործիչների հետ: Այդ են վկայում այն նամակները, որոնք ժամանակին ուղղված են եղել գիտնականին: Այդ նամակների և Մառին նվիրած բազմաթիվ գիտական աշխատությունների հեղինակների նվեր-գրքերը գտնում ենք Պետերբուրգի Արևելյան ձեռագրերի ինստիտուտի Մառի ֆոնդում:

### **3.5. Ռ-Դ ԳԱ Արևելյան ձեռագրերի ինստիտուտի հայկական ֆոնդի գործունեության պատմությունից<sup>36</sup>**

Ռ-Դ Հյուսիսային մայրաքաղաքում արևելագիտության զարգացումը կապված է մասնավորապես Պետերբուրգի Արևելյան լեզուների ֆակուլտետի և նրա ղեկավարի՝ արաբագետ, իսլամագետ Վ. Ռ. Ռոզենի հետ: 1921թ. մայիսի 15-ին Ռ-Դ ԳԱ Ասիական թանգարանին կից կազմավորվում է Պետերբուրգի Արևելագետների կոլեգիան: 1921թ. միությանն է միանում նաև Ռուսական հնագիտական ընկերության Արևելյան բաժանմունքը, ուր իրենց գործունեությունն էին ծավալում Ն. Մառը և Հովսեփ Օրբելին:

Այստեղ են պահվում Պետերբուրգի Գիտությունների Ակադեմիայի, Արտաքին գործերի նախարարության, Արևելյան ձեռագրերի ինստիտուտի աշխատությունները: Այստեղ են հրատարակվել արևելագիտական 2 արժեքավոր հուշարձանները՝ «АМ РАН 1818-1918е, краткая памятка, посвященная 100-летию АМ, вышедшая в 1920г.» և «Азиатский сборник»-ը: Վերջինիս՝ «Ասիական հավաքածուի» էջերում էին հրատարակվում գրաբար և հին վրացերեն բնագրերը: Այստեղ էր Ն. Յ. Մառի անմիջական հսկողությամբ իրականացվում գրաբարի ուսումնասիրությունը<sup>37</sup>:

Ասիական Թանգարանի հիմքի վրա 1930թ. վերակազմավորվում է Արևելագիտության ինստիտուտը, որն այնուհետև գործում է Գիտությունների ակադեմիայի կազմում (Ռ-Դ ԳԱ Արևելյան ձեռագրերի ինստիտուտ): Ստեղծման առաջին տարիներից այստեղ են բերվում հայկական ձեռագրեր: Այստեղ երկար տարիներ հայագիտական ուսումնասիրություններ են ծավալել Մառը և Օրբելին, Ռուսուդան Օրբելին, Կ. Ն. Յուզբաշյանը:

Յուրաքանչյուր ձեռագիր ունի բազմաթիվ կնիքներ կամ գրություններ: Ըստ այդմ էլ պատկերացում ենք կազմում ձեռագրի անցած ուղու մասին: Այսպես, օրինակ, Վանում գրված ժողովածուն ձեռք է բերվել Գիտությունների ակադեմիայի շնորհիվ՝ հատուկ արշավախմբի միջոցով: Որոշ ձեռագրեր կրում են արտագործնախարարության Արևելյան լեզուների ուսումնական բաժանմունքի կնիքը: Ինստիտուտի հայկական ձեռագրերի պատմությունը սերտորեն կապված է ինստիտուտի առաջին տնօրենի՝ Իս.Դ. Ֆրենի (1782-1851) անվան հետ: Նա մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում հենց հայկական ձեռագրերի հանդեպ:

<sup>36</sup> Նյութերը քաղված են Ռ-Դ ԳԱ Արևելյան ձեռագրերի ինստիտուտի արխիվային ֆոնդից, Фонд Азиатского музея 152 , оп. 1а, ед, хр, 113

<sup>37</sup> Արխիվում պահպանվել է Մառի ձեռագիր տետրը:

Շատ ձեռագրեր անմիջաբար կրում են Ֆրենի ստորագրությունը: Որոշ ձեռագրեր, վերնագրեր թարգմանված են նրա կողմից: 1844թ. Ֆրենը կազմում է Ասիական թանգարանի հայկական ձեռագրերի կատալոգը՝ բաղկացած 22 ձեռագրերից: Վերջինս հրատարակվել է ակադեմիկոս Բ. Ա. Դորնի ժողովածուի մեջ, որն առ այսօր պահվում է ինստիտուտի ֆոնդում:

Կովկասագետ Մ. Ի. Բրոսսեն (1802-1880թթ.) Պետերբուրգի ԳԱ պատվավոր անդամ էր: Հայ մտավորականների հետ երկարատև համագործակցության արդյունքում նա նյութեր էր հավաքում Ասիական թանգարանի համար: Դրանք թե՛ բնագրեր էին, թե՛ պատճենած կրկնօրինակներ: Բրոսսեի մահից հետո 1884թ համալրվում է հայկական ու վրացական ձեռագրերի ֆոնդը և ինստիտուտին է տրամադրվում նրա գիտական արխիվը:

1912-1916թթ. ֆոնդը համալրվում է հնագետ և կովկասագետ Ս. Վ. Տեր-Ավետիսյանի տրամադրած ձեռագրերով: Այստեղ են գտնվում նաև Մուրավյով-Կարսսկու, Կ. Ա. Կոստանյանի, Ն. Մառի, Կ. Ա. Աբրահամյանի և մյուսների ժողովածուները: Ներկայումս Արևելյան ձեռագրերի ինստիտուտի հայկական ձեռագրերի ֆոնդում առկա է 410 միավոր ձեռագիր:

Հայկական ձեռագրեր են պահվում նաև Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի հազվագյուտ գրքերի բաժնում (1 ձեռագիր), արևելագիտության ֆակուլտետի գրադարանում (թվով 4 ձեռագիր՝ հմր. 458-462), պետական էրմիտաժում (8 ձեռագիր՝ հմր. 463-470), Ռուսաստանի Ազգային գրադարանում (Ա. Ն. Օլենինի, Ֆրայլի, Լազարևի, Ի. Հովհաննիսյանի ժողովածուները՝ թվով 113 միավոր (1-113): Այստեղ են գտնվում հնատիպ ու ժամանակակից հայկական գրքերի հավաքածուները, Մառի և Օրբելու ֆոնդերը, որոնք համալրվում են նորանոր նվիրատվություններով: Հնատիպ և նոր գրքերի ֆոնդերը կազմավորվեցին 2013-2017թթ., և ուսումնասիրողներին հասու են այդ աշխատությունների կատալոգները:

## **ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Պետերբուրգի հայ գրական կյանքը 18-րդ դարի 60-80-ական թվականներին մաս էր կազմում կայսրական գրականությանը, ուներ ընդգծված ներբողական բնույթ՝ ստուգաբանվելով Եկատերինյան դարաշրջանի գրականության շրջանակում:

2. Պայմանավորված արքունական բնույթով և հեղինակների բարձրաստիճան հոգևորականներ լինելով կամ նրանց պատվերով գրված ստեղծագործություններով, որոնք հաճախ ներկայացվում էին ռուսերեն զուգահեռ թարգմանություններով, այդ ստեղծագործությունները գրվում էին գրաբարով, գրական ավանդույթի առումով շարունակելով նախորդ տասնամյակներից եկող թղթի ժանրի և կրոնա-եկեղեցական ջատագովական գրականության ավանդները:

3. Ինչպես ողջ հայ գաղթաշխարհում, այնպես և Պետերբուրգում, Աբովյանին նախորդող շրջանից ձևավորվող հայ գրականության կարևոր մասն

է կազմում տեղի հայկական տպագրությունը: Թե՛ հրատարակվող գրքերում են արձարծվում նոր գրականության և աշխարհաբարի՝ որպես գրական նոր լեզվի հետ կապված հարցերը և թե՛ այդ հրատարակությունների սկզբի տիտղոսաթերթային ձևակերպումներում և հիշատակարանային վերջաբաններում կան ակնհայտ գրական արժեք ունեցող բնորոշումներ և հատվածներ:

4. Արևելյան Հայաստանի՝ 1828թ. Ռուսական կայսրությանը միանալով փոխվում է նաև Պետերբուրգի հայ գրական կյանքի ուղղվածությունը, լեզուն և թեմատիկան: Ստեղծվող գրականությունը 18-րդ դարում եթե որոշակիորեն ուղղված էր ռուսական արքունիքին՝ արձարծելով Հայաստանի ազատագրության հարցը, ապա 19-րդ դարի առաջին տասնամյակներից դառնում է ուսանողական-ժողովրդական գրականություն, սերտորեն կապվելով համառուսական հեղափոխական գրականության հետ:

5. Պետերբուրգի ուսանողական գրական կյանքի մարմնավորումն են դառնում Ռափայել Պատկանյանի և Միքայել Նալբանդյանի ստեղծագործությունները՝ մեկ ամբողջություն կազմելով նաև Մոսկվայի հայ համայնքի ուսանողության ստեղծագործությունների հետ: Նման գործերի մի մասում ոչ միայն ուսանողական միջավայրի հարցերն են արձարծվում, այլև անգամ այդ ստեղծագործությունների վերնագրերում հիշվում է «հայ ուսանող» կապակցությունը:

6. Տերյանի և Չարենցի համար բավականին մեծ եղավ Պետերբուրգի ազդեցությունը: Տերյանի դեպքում այն դրսևորվեց հայ բնաշխարհից հեռու ձևավորված բանաստեղծության լեզվով, գրական-գեղագիտական աշխարհայացքով, Գրկու և ռուս դասական գրականության հետ անմիջական շփմամբ:

7. Չարենցի դեպքում ընդհանուր աշխարհայացքային և գեղագիտական ըմբռնումներից բացի Լենինգրադը դարձավ հեղափոխության տարերքի երկրորդ արտահայտությունը: Ի տարբերություն Տերյանի, Լենինգրադը նաև թեմատիկ, սյուժետային իր արտահայտություններն ունեցավ Չարենցի «Էպիքական լուսաբաց» շարքի տարբեր բանաստեղծություններում:

8. 20-րդ դարում ևս կարևորվում է Մկրտիչ Էմինով, Նիկողայոս Մառով, Հովսեփ Օրբելիով ու Կարեն Յուզբաշյանով Պետերբուրգում մինչև այսօր շարունակվող հայագիտական դպրոցի գործունեությունը՝ միջնադարագիտությամբ և հայ գրականության պատմության ուսումնասիրությամբ:

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ**

1. Լազարյանների դերը ռուսահայ մշակութային կյանքում, Երիտասարդ գրականագետների հանրապետական գիտաժողովի նյութեր, ՀՀ ԳԱԱ

Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, Երևան, 2013, էջ 260-268:

2. Տերյանի Պետերբուրգյան շրջանի պոեզիան և նամականին, Երիտասարդ գրականագետների հանրապետական գիտաժողովի նյութեր, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, Երևան, 2013, էջ 60-69:
3. Նիկողայոս Մառի դերը հայագիտության բնագավառում, «Հայագիտական հանդես» № 1(25), Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, 2014, էջ 194-203:
4. «Этнокультурная жизнь армян Петербурга: (научная статья), // «Традиции российского кавказоведения.» Выпуск 1. Сборник статей // Сост. и ред. И.В. Базиленко, О.А. Воднева; ИБР РАН. — СПб.: Изд-во «ЛЕМА», 2016. 309 с., /ISBN 978-5-00105-127-5: ББК 63(2)— стр. 243-252.
5. Армянские типографии Петербурга: научная статья, // «Письменные памятники армянского наследия». Составитель, редактор Д. С. Мкртчян. Издательство СПбГУ, СПб 2017, 236с /ISBN 978-5-288-05743-4; ББК 71 П 35./- стр. 98-108.
6. Роль Рафаэла Патканяна в развитии армянской литературной и культурной жизни Петербурга»: научная статья, // «Письменные памятники армянского наследия». Составитель, редактор Д.С.Мкртчян. Издательство СПбГУ, СПб, 2017, 236с, /ISBN 978-5-288-05743-4; ББК 71 П 35./- стр. 179-192.
7. Иосиф Аргутинский и русско-армянские культурные отношения XVIII века, Научная статья на армянском языке, // «Письменные памятники армянского наследия». Составитель, редактор Д.С.Мкртчян. Издательство СПбГУ, СПб 2017, 236 с. /ISBN 978-5-288-05743-4; ББК 71 П 35. /- стр.219-230.

## **МКРТЧЯН ДОНАРА СЕРЕЖАЕВНА**

### **Армянская литературная жизнь Петербурга с 18-го века до первых двух десятилетий 20-го века**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.01 - «Армянская классическая литература»

Защита диссертации состоится 7 февраля 2020 года в 12.30 на заседании Специализированного совета Литературоведение 003 Института литературы имени

М. Абеяна НАН РА по адресу: ул. Григора Лусаворича 15, 0002, г. Ереван, Республика Армения

С диссертационной работой можно ознакомиться в научной библиотеке Института литературы имени М. Абеяна..

### **РЕЗЮМЕ**

В истории армянской культуры и литературы важное место занимает Петербург. Созданную там литературу можно подразделить на две группы:

1. Литература, созданная непосредственно в среде данной армянской общины. Произведения, написанные в петербургский период жизни и творчества разных армянских писателей. Эти сочинения, составляя часть общего литературного наследия данного автора, одновременно носят печать литературной и общественной жизни Северной столицы России.

Второй важной целью диссертационной работы было представление максимально полного библиографического списка, написанных в Петербурге произведений, наряду с их анализом.

Диссертационная работа имеет важное значение в плане изучения армяно-русских историко-культурных и литературных связей. В работе выявлена лепта армянской общины Петербурга в истории Российской Империи. Приводится высокая оценка истории и литературы армянского народа, данная представителями русской интеллигенции и академической науки, что приобретает в наши дни особую важность в контексте армяно-русских отношений. Выявление и оценка значения присутствия армян с момента основания Петербурга и их литературно-культурной деятельности имеет важное значение и для сегодняшней армянской общины города, как носителя и продолжателя этих традиций.

Диссертационная работа может способствовать уточнению ряда вопросов истории армянской литературы. Работа состоит из Введения, трех глав, Выводов и Списка использованной литературы.

**Первая глава- «Армянская литературная жизнь Петербурга в 18-ом веке»-** посвящена изучению написанных в армянской общине Петербурга в 1730-50-ые годы армянских рукописей и их колофонов, являющихся первыми проблесками литературной жизни общины. Важными произведениями периода 1760-70гг. являются три Оды, посвященные Екатерине Второй. Анализируются также изданные в армянской типографии Петербурга в 1780-е годы книги и их колофоны, рассматриваемые в работе в качестве самостоятельных литературных сочинений.

Созданная в Петербурге в 18-ом веке литература характеризуется как дворцовая, тесно связанная с литературой Екатерининской эпохи.

**Во второй главе- «Армянская литературная жизнь Петербурга в 19-ом веке»** - представлен анализ литературных произведений, созданных в новой политической ситуации за первые два десятилетия 19-ого века. В условиях укреплении армяно-русских литературных и политических связей, в этих сочинениях восхваляется Российское государство, а также подчеркивается мысль, что Россия имеет великую освободительную миссию по отношению к армянскому народу.

Анализируются литературно-общественная и научная деятельность нескольких поколений рода Паткянцян в Петербурге, их связи с представителями русской академической науки своего времени. Проведено изучение краткого периода жизни и деятельности Микаэла Налбандяна, проведенного в Петербурге и в застенках Петропавловской крепости- с 1863-65гг.

**В третьей главе- «Армянская литературная жизнь Петербурга первых двух десятилетий 20-ого века»-** представлена литературная жизнь армянской общины Петербурга в начале 20-ого века. Анализируются деятельность литературно-общественных организаций, издаваемая периодика и книжные издания. Отдельная подглава посвящена петербургскому судопроизводству над Ованесом Туманяном в 1911г., его встречам с представителями русской интеллигенции Петербурга после оправдания поэта.

Показано, какой неизгладимый след оставили дореволюционный Петербург и постреволюционный Ленинград на мировоззрение и художественное мышление Ваана Теряна и Египше Чаренца.

В заключительной части данной главы и работы в целом представлены хранящиеся в Институте Востоковедения Петербурга и в различных научных учреждениях армянские рукописи и документы. Подчеркивается роль армянских и русских ученых города в деле развития арменоведения и изучения армянской средневековой литературы.

**Выводы-** После вхождения Восточной Армении в 1828г. в состав Российской Империи, меняются направление, язык и тематика армянской литературной жизни Петербурга. Если создаваемая в 18-ом веке литература определенным образом была направлена на Российский двор, поднимая вопрос освобождения Армении, то с первых десятилетий 19-ого века, она становится так называемой «студенческо-народной» литературой, тесно связанной с общерусской революционной литературой.

С армянской литературной жизнью Петербурга была тесно связана местная школа арменоведения. Проводимые научные исследования, издание трудов армянских средневековых историков, обсуждения различных историографических вопросов напрямую были связаны с продолжением традиций армянской литературы. Не случайно, что Микаэл Налбандян и Рафаел Паткянцян параллельно с литературной деятельностью в Петербурге занимались различного рода арменоведческими исследованиями, при обращении к прошлому поднимая животрепещущие вопросы своего времени.

Петербург продолжал оставаться перекрестком армянской литературной жизни, центром поднятия и обсуждения литературно-эстетических вопросов и в период первых десятилетий 20-ого века.



**DONARA S. MKRTCHYAN**  
**THE ARMENIAN LITERARY LIFE OF PETERSBURG IN THE FIRST TWO**  
**DECADES OF THE 18-20th CENTURY**

The abstract of the Dissertation for the scientific degree of the Candidate of of Philological Sciences

Speciality 10.01.01- “Armenian Classical Literature”

The defence of the dissertation will take place on February 7, 2020, at 12.30 at the Specialized Council of Literary Criticism 003 at the Institute of Literature after

M. Abeghyan, NAS, RA

Address: Yerevan, 15 Grigor Lusavorich Street

This dissertation is available in the scientific library of the institute of literature after M. Abeghyan.

**SUMMARY**

Petersburg has an essential role in the sphere of Armenian culture, as well as in the history of literature. The created literature in Petersburg is divided into two groups.

1. The literature created immediately in the local Armenian community environment.
2. The literary works of life and activity of different Armenian authors written in the petersburgian period. These works became a part of the author’s general literary heritage and simultaneously bore the general seal of literary and public life of the northern capital of Russia.

Besides the analysis of the works written in Petersburg, the second aim of the dissertation is to represent all these works within the maximum bibliographic coverage.

The dissertation consists of three chapters, conclusion, and the list of the used literature. The dissertation is important from the point of view of the study of the history of Armenian-Russian historical-cultural and literary relations. Besides the study shows the contribution of the Armenian community of Petersburg to the history of the Russian Empire. It is also presented that the history and literature of the Armenian people are highly appreciated by Russian intelligentsia and academic science, which nowadays is of particular importance for Armenian-Russian relations. Since the foundation of Petersburg, the presence of the Armenians and the revelation of their literary-cultural activity have been of social-political importance for the present-day Armenian community of the city as the bearer and continuer of those traditions.

The dissertation helps to clarify a number of issues related to the history of Armenian literature.

**In the first chapter, entitled “The Armenian Literary Life of Petersburg in the 18th Century”,** are represented the first manuscripts and their records of the literary activity of the local Armenian community dating back to the 1730s and 50s. The main literary works are the three odes dedicated to Catherine II written in the 1760-70s. Dissertation also examines the published books and their records, which are regarded as separate literary works and printed in the Armenian printing house of Petersburg in the 1780s.

The literature created in Petersburg in the 18th century is characterized as courtier literature, which is closely connected to the Catherinian period literature.

**The second chapter entitled “The Armenian Literary Life in Petersburg in the 19th Century”**, with the same approach examines the works of the first two decades of the 19th century, written in a completely different political situation. In the conditions of increasing Russian-Armenian literary and political closer relations these works glorify Russia, as well as emphasize the idea that Russia has a major role (mission) in the liberation of Armenian people.

This chapter also reveals the special role of the Armenian students in the literary and social life of Armenian community of Petersburg, who from the one side were greatly influenced of the Pan-Russian progressive ideas of that time, and from the other side they were compiling the national-liberation struggle plan.

Besides, it shows the literary, social and scientific activities of several generations of the Patkanians family in St. Petersburg, including the connection with the Russian academic science of that time. The same relates to M. Nalbandian's life in Petersburg and Petropavlovsk fortress from 1863 to 1865.

**The third chapter entitled as “The Armenian Literary Life in Petersburg in the First Two Decades of the 20th Century”** presents the literary life of Petersburg in the beginning of the 20th century, covering the literary and social organizations, printed media, and books. A separate sub-chapter is dedicated to H. Tumanyan's petersburgian trial in 1911 and the established ties with the Russian intelligentsia after being released from 40-day imprisonment.

In the dissertation it is shown how pre-revolutionary Petersburg and post-revolutionary Leningrad left their emphasized influence on the outlook and artistic thinking of Vahan Teryan and Yeghishe Charents. This chapter and the dissertation conclude with the presentation of Armenian manuscripts and documentaries kept at the Institute of Oriental Studies in St. Petersburg and various scientific institutions.

**Conclusions** - Eastern Armenia in 1828 joined the Russian Empire, consequently the direction, language and thematic of the Armenian literary life in St. Petersburg was changed. If the literature created in the 18th century was directed to the Russian royal court to raise the question of liberation of Armenia, beginning from the first decade of the 19th century it became a student-folk literature thus closely connecting to the revolutionary Pan-Russian literature.

The local school of Armenian Studies was closely connected to the Armenian literary life in Petersburg. The scientific researches, publications of the works of the medieval Armenian historians, the discussions of various historical issues were directly connected to the continuation of the traditions of the Armenian literature, its popularization and image-making. It is no coincidence that M. Nalbandyan and R. Patkanyan in St. Petersburg have combined their literary activity with various researches of Armenian Studies, revising questions of contemporary relevance through the prism of the past.

In the first decades of the 20th century Petersburg continued to remain in the crossroads of Armenian literary life, thus playing a special role in disseminating and raising the question of literary aesthetics in the Armenian life.